Կարող են լինել զինվորականների այնպիսի գործողություններ, վորոնք չարամտորեն կամ նախամտածված կերպով խանդարում են կարմիք բանակի մարտունակությունը: Այսպիսի հանցանքները ջուր են լցում դասակարգային թշնամու ջրաղացին: Ուրիշ կերպ ել չի կարելի բացատրել այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են կարգապահության կոլեկտիվ խախտումը, դասակարգությունը, պետական գույքի հափշտակումը, հրամաններ չկատարելը, պետի վրա բռնություն դործ դնելը, պահակային ծառայության կանոնների խախտումը, հինահարությունը կամ ավաղակությունը և այլն: Կարող են լինել նաև ուղղակի հակահեղափոխական յելույթներ՝ բանակը սողոսկած դասակարգային թշնամու կողմից: Այս տեսակի բոլոր հանցանքների նկատմամբ կիրառվում են ներգործելու խիստ միջոցներ—յերկարատև կալանքից մինչև գնդակահարությունը:

Յուրաքանչյուր կարմիք բանակային պարտավոր և վոչ միտյն ինքը հետեւել ու անշեղորեն պահպանել յերկաթ հեղափոխական կարգապահությունը, այլև պայքարել նրա համար, վորովեսդի իր ընկերները ևս չխախտեն այն: Ամեն մի հանցանք պետք ե վճռականորեն դատապարտվի վողջ կարմիք բանակային մասի կողմից: Յուրաքանչյուր կարմիք բանակային պետք և զգա, վոր խախտելով կարգապահությունը, նա ամոթալի դործ և կատարում: Անձնական որինակով, կարգապահության մեջ յետամնացներին սոցմբցման կանչելով, յուրաքան-

չյուր մարտիկ պետք ե աշխատի, վոր իրեն յենթաքածանում տեղի չունենա և վոչ մի կարգապահահական հանցանք: Բանվորների և դյուզացիների բանակում պետք ե լինի իսկական յերկաթե հեղափոխական կարգապահություն:

Խորհեցեք, ընկերներ, իլլիչի խոսքերի մասին.

«Ով ամբողջապես և անձնվիրությամբ չի ոգնում կարմիք բանակին, իր բոլոր ուժերով չի աջակցում նրա կարգին ու կարգապահությանը՝ նա մատնիչ ե և դավանան»:

#### 10. Հրամանադրաբ գորամասի դիկայլարն և և մարտական վարորդը

Պետկաղմը՝ դա հիմնական ողակն և մեր հեղափոխության զինված ուժերի սիստեմում: Նա հանդիսանում է կաղմակերպող հիմնական ուժերից մեկը, վորոնք ամբացնում և շարժման մեջ են դնում կարմիք բանակի վողջ որդանիղմը:

Յուրաքանչյուր դորամասի գլուխ կանգնած ե հրամանադրաբ: Խաղաղ ժամանակ հրամանադրան ամբողջապես պատասխանատու յե մարտիկների մարտական վարժեցման համար: Հրամանադրաբի պատրաստությունից ե կախված մարտիկների պատրաստությունը: Խոկ մարտիկների պատրաստությունը բարդ դործ ե: Վորզեսդի հրամանադրաբ կարողանա գլուխ հանել նրանց հետ, պետք ե ինքը սովորի անընդհատ: Հրամանադրաբը պետք ե մշտապես իրազեկ լինի, թե ինչ ե կատարվում կապիտալիստական բանակներում, հետեւի բոլոր նորություններին ուղղմական գործում, տիրապետի նոր տեխնիկային: Հրամանադրաբ կարմիք բա-

նակում վոչ միայն մարտիկի ուսղմական պետքն ե, այլև  
նրա քաղաքական դաստիարակը։ Նա բացատրում ե  
նրան կուսակցության և Խորհրդային իշխանության քա-  
ղաքականությունը, համախմբում և մարտիկներին Համ-  
կ(ր)Կ-ի գլխավոր գծի շուրջը։ Հրամանատարը պատաս-  
խանատու յե մարտիկների քաղաքական պատրաստու-  
թյան համար։ Դրա համար ել ինքը պետք ե քաղաքա-  
կանապես զրադես լինի և շատ սովորի, աշխատի։  
Հրամանատարի պատասխանատվությունն ավելի շատ  
ե պատերազմի ժամանակի։ Նա պատասխանատու յե  
մարտական գործողության հաջողության համար, դա-  
սակարգային թշնամուն հաղթելու համար։ Նա յե տա-  
նում կարմիր բանակայիններին մարտի և նրա գործո-  
ղությունից ե կախված հարյուրավոր մարտիկների  
կյանքեր։ Իսկ ժամանակակից մարտը բարդ ե, հաղեց-  
ված տեխնիկայով, յի ամեն տեսակի անակընկալու-  
թյուններով—ավելացնելի, մեքենայացրած զորամասերի  
հանկարծակի հարձակում և այլն. արագնթաց ե։ Հրա-  
մանատարը պետք ե կարողանա արագորեն ընդունել  
ճիշտ վորոշումներ, յերեան բերել ձեռներեցություն։  
Նա պետք ե ունենա ուժեղ կամք, վճռականություն,  
անվեհերություն։ Իր բոլոր խնդիրների հետ նա կարող  
ե դլուի հանել միայն այն դեսպում, յեթե կարմիր բա-  
նակային մասսան կհամախմբվի նրա շուրջը, ցույց կտա-  
նրան ամեն տեսակի աջակցություն։ Հրամանատարի  
յուրաքանչյուր հրաման պետք ե կատարվի ճիշտ, արագ  
և առանց առարկելու։ Այն կարմիր բանակայինը, վորը  
դանդաղկոտ, կամ վոչ ճիշտ ե կատարում հրամաննե-  
րը,—ամբողջ զորամասի խանդարիչն ե, մեծ զնաս և

տալիս նրան, խանդարում դաստիարակային թշնամուն  
հաղթելուն։

Յուրաքանչյուր գիտակից մարտիկ պետ ե ուժեղաց-  
նի հրամանատարի հեղինակությունը։

Հրամանատարի հրամանը՝ որենք ե մարտիկի հա-  
մար։

Կարմիր բանակում հրամանատարների հետ միասին  
կամ կոմիսարներ։ Քաղաքացիական պատերազմի ժա-  
մանակ կարմիր բանակի շարքերն եյին կանչված հին  
բանակի սպանները։ Խորհրդային իշխանությունը չեր  
կարող լիովին նրանց հավատալ, որա համար ել յուրա-  
քանչյուր հրամանատարի մոտ նշանակվում եր կոմիսա-  
րը—կուսակցության և Խորհրդային իշխանության ներ-  
կայացուցիչը, ստուգված և ակտիվ բայլէկիկ։ Կոմիսա-  
րը հսկում եր հրամանատարի բոլոր գործողություննե-  
րի ճշոտությանը, դեկալարում եր քաղաշխատանքը և  
տանում մարտիկների քաղաքական և դաստիարակչա-  
կան վողջ աշխատանքը։ Քաղաքացիական պատերազմի  
տարիների ընթացքում շատ կոմիսարներ սովորեցին  
ուղմական գործը և իրենք դարձան զորամասերի հրա-  
մանատարներ։ Մյուս կողմից ուղղմական դպրոցներն  
անընդհատ լրացնում են բանակի շարքերը հրամանա-  
տարներով։ բանվորներից ու դյուլացիներից, կուսակ-  
ցության անդամներից։ Քաղաքացիական պատերազ-  
մում ստուգվեցին նաև հին սպայության կադրերը։  
Նրանք, ովքեր վստահելի չեյին կամ ծառայում եյին  
վախի, և վոչ թե խղճի մատք, դուրս մազվեցին։ Մնա-  
ցած մասը մարտերում, և խաղաղ ուսուցման մեջ ապա-  
ցուցեց իր նվիրվածությունը Խորհրդային իշխանու-  
թյան։ Ներկա մոմենտում ԲԳԿ հրամատարների մեծա-

մասնությունը կազմում են Համկ(բ)կ անդամները : Այս բոլորը թույլ տվին բանակին անցնելու միամնայի իշխանության : Քաղաշխատողների հիմնական պարտականությունը դորամասի կուսակցական և քաղաքական ղեկավարությունն է : Ղեկավարելով կուսակցական կարմակերպությունը և քաղաքականապես ապահովելով մարտական ուսուցման ամբողջ ընթացքը, քաղաշխատողը հրամանատարի հետ միասին լիովին պատասխանառու յե դորամասի դրության համար : Յեթե հրամանատարը կուսակցության անդամ ե և ունի կուսակցական քաղաքական աշխատանքի անհրաժեշտ վորձառություն, նա նշանակվում է միանձնյա-հրամանատար և ունի քաղաքական մասի ողնական, վորը միանձնյա իշխանավորի ընդհանուր ղեկավարությամբ կենսագործում և դորամասի քաղաքական և կուսակցական աշխատանքի ղեկավարությունը :

Մեր բանակում կորպուսների, գիվիտիաների, դընդքերի և վաշտերի հրամանատարների ճնշող մեծամասնությունը միանձնյա ղեկավարներ են :

Կարմիր բանակի ղլխասկետական կաղմը, արժանավոր հեղինակություն և վայելում կարմիր բանակայինների մոտ : Այդ հեղինակությունը ձեռք ե բերված, նվաճված և թե խաղաղ ուսուցման մեջ և թե մարտական ստուգումների ժամանակ : Կարմիր բանակի հրամանատարին մարտիկը տեսնում է իրեն հետ առաջավոր դիրքերում :

Ահա ինչ ե ասում Հեռավոր Արևելյան Հատուկ Կարմրադրոշ Բանակի մարտերի փորձը :

«Թե հրամանատարները և թե քաղաշխատողները հանդիսավոր կերպերվելով ղեղի վտանգը, մարտիկներին տանում եյին ճակատամարտի :

Ավագ պետերը—գիվիդիպիաների հրամանատարները և կոմիսարները—վոչ միայն ղեկավարում եյին գործողությունները, այլև անմիջականորեն մասնակցում եյին մարտերին : Բանակի քաղաքական վարչության և քաղաքական բաժինների աշխատողները բացի գործողությունները քաղաքականապես ապահովելու բարդ աշխատանքից, մարտիկների հետ միասին, կողք կողք, արկերի պայմումների և դնդակների սուլոցների առաջ զնում եյին առաջավոր դռաթի չղթաներում :

...Դասակի հրամանատարը ընկ . Ավերինը 8 կարմիր բանակայինների հետ ըրջապատված եր չինական 28 հեծելակների կողմից : Նա առաջարկեց նրանց անմիջապես անձնատուր լինել : Ոլինական հեծելազորը նրան համարում եր արդեն իր ղերին և դրա համար ել առաջարկությանը պատասխանեց համազարկով : Հմտորեն ղեկավարելով իր ութը մարտիկներին, Ավերինը ցրեց և մասամբ կոչնչացրեց հակառակորդին : Այդ կովում նա վիրավորվեց կրծքից : Դասակի հրամանատար ժուլիկովը, միշտ գտնվելով դասակի առջևում, դրոհի յեղնացել յերեսունից ավելի անդամ : Սպիտակները նրա տակ յերկու ձի յեն սպանել : Ժուլիկովը շարքից զուրս յեկավ միայն փորեց լուրջ վիրավորվելուց հետո : Դասակի հրամանատարը ընկ . Կիմ-Յուդինը մեռավ հենց առաջին մարտերում Մանջուրիայի տակ : Նա մարտից զուրս եր գալիս վերջնը : Հակառակորդի հետազնդելու ժամանակ ձեռքին նորակներ եր շպրտում բլանդաժները, վորտեղ դարան եյին մտել սպաները :

Մահացու վիրավոր, մերնելուց մի քանի ժամ առաջ նա ասաց՝ «Սպիտակներին թանգ նստեց իմ մահը» :

... Մանջուրիայի տակ մարտում սպանված ե զընդքացրավոր վաշտի հրամանատար ընկ. Տաղովը։ Նա սպանվեց այն ժամանակ, յերբ պաշտպանելով իր վաշտի ժամանակավոր յետախուզությունը, կիս հանգիւթեց հակառակորդին։ Բանդիտական նոնակը կարճեց նրա կյանքը։

Հեռավոր Արևելյան Հաստուկ Բանակի ամբողջ պետկաղմը կրնջլիկտի որերին արդարացրեց ԲԳԿԲ հրամանատարի պատվավոր կոչումը։ Շատ հրամանատարներ ընկան հերոսական մահով, շատերը վիրավորվեցին, բայց վոչ մեկը թուլամորթ դուրս չեկավ, չտատանվեց, թույլ չտվեց իրեն մարտական փորձությունների որերին յետ քաշլել մարտերը ղեկավարելու պատասխանատվությունից։

Վ. Ի. Լենինը գեռես քաղաքացիական պատերազմի առարիներին այսպես եր զնահատում ԲԳԿԲ հրամակադր։

«Հին բանակը գենեք եր հարուստների ձեռքին։ Նրա սպաների մեծ մասը կալվածատերերի յերես առած զավակներն եյին, նրանք բանակին տանում եյին սխալ ուղղով։ Խոկ մենք սաեղծում ենք մեր բանվոր, կարմիր սպաները, վորոնց վրա և դնում ենք մեր բոլոր հույսերը։ Նրանց կողմից առանորդվող բանակը կիմնի բոլոր աշխատավորների անձնուրաց պաշտպան։ Կարմիր սպաները կսահմանեն բանակում աշխատանքի կարգապահություն։ Նրանք մշտապես շփմելով բանվորների և գյուղացիների շետ, կուվորեցնեն նրանց սոցիալիզմի և հասկացված կիմնեն, վորովիետու կիմնեն անկեղծ և կլարդանան բռլորին սիրագործության կոչել։ Այն ժամանակ

կարմիր սպայի հեղինակությունը մասսայի մեջ կլիմի անսասան և անսահման մեծ։ Այդպիսի սպակումը անսասան և անսահման մեծ։ Ենթադրությունը բանակն անհաղթելի կլիմի։ Յերակ առաջնորդվող բանակն անհաղթելի կլիմի։ Յերակ այդպիսի բանակը մեր կարմիր բանակն ե»։

## 11. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԳԿԲ-ՌԻՄ

Բուրժուական բանակի զինվորի քաղաքական մշտակումը հետապնդում ե մի նպատակի՝ հարկադրել նրանց ծառայել կապլատալիսաների շահերին։ Տերտերն ու մենաշեմիկը, վարժապետն ու բուրժուական «ղազեթաչին» ձգտում են մի բանի՝ խանդարել զինվորին՝ չըմբռնել իր զարակարգային ինտիրները, թույլ չտալ նրան հասկանալու, վոր նա կուլում ե վոչ թէ իր շահերի, այլ կապիտալիսաների ողուաների համար, «Հայրենիքի պատապանության» մասին սուտ հեքյաթների միջոցով զինվորին հայտնալու գործիք գարճնել բուրժուալիայի ձեռքին։

Քաղաքական աշխատանքը կարմիր բանակում հետապնդում ե մեկ նպատակի՝ սպակությունել կարմիր բանակայինին՝ հասկանալ իր դասակարգային շահերը, համայնմբել մարտիկներին կոմունիստական կուսակցության շուրջը՝ պայքարելով նրա գլխավոր գծի համար։ Բացարձել կարմիր բանակայիններին նրանց խնդիրները մարտական ուսուցման և կարգապահության ասպարիցում, բարձրացնել նրանց կուլտուրական մակարդակը։

Ինչքան ավելի պարզ լինի յուրաքանչյուր մարտեցն, թե ինչ խնդիրներ են կանգնած ԽՍՀՄ բանվոր

դասակարգի առաջ, վորը միացած աշխատավոր գյուղացիության հետ, սոցիալիզմ և կառուցում, ինչքան մարտիկն ավելի լավ յուրացնի, թե ով ենրա բարեկամը և ով թշնամին, թե ինչի համար ե պայքարում նորությային իշխանությունը, ինչ ե պաշտպանում կարմիր բանակը, այնքան ավելի լավ մարտիկ կունենա նորությային Միությունը: Այն մարտիկը, վորը չիտե, թե ինչի համար ե կովկում, վաստ մարտիկ ե: Նա անտարբեր և դեպի ուսուցումը: Կովկի դաշտում նրան պատում ե վախը իր կյանքի համար: Այն մարտիկը, վորը գիտե, վոր պայքարում ե ամբողջ աշխարհի աշխատավորների հարագատ և իր սեփական շահերի համար, մարտական պատրաստության գործի մեջ դնում ե աշխատանք, ձգում, ննուուղիաղմ: Նա պատրաստ է կրել մարտական աշխատանքի զրկանքները և զոհել իր կյանքը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հաղթանակի համար:

Վորակնողի մարտիկը կարողանա հասկանալ բանվոր դասակարգի և նրա կողմից դեկավարող աշխատավոր գյուղացիության խնդիրները, վորպեսզի կարողանա քննել ու հասկանալ կատարվող դեպքերը, նա պետք ե քաղաքականապես դրագետ լինի, կարողանա թերթ ու պերե կարդալ, բոլոր հարցերի նկատմամբ ընդլայնել իր գիտությունը:

Մարտիկի դասակարգային համախմբվածությունը, նրա սոցիալիստական լուսավորությունը—ահա ինդիբներ, վորոնց լուծմանն ե ուղղված կարմիր բանակի քաղաշխատանքը:

Կոմունիստական կուսակցությունը՝ բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների առաջնորդն ե: Նրա

դեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները կատարեցին Հոկտեմբերյան հեղափոխությունը, հաղթեցին քաղաքացիական կովկում, հաջողությամբ սոցիալիզմ են կառուցում:

Կուսակցության գլխավոր գիծը—դա բանվոր դասակարգի հաղթությունների գիծն ե գյուղացիության հետ միացած:

Մարտիկի դասակարգային համախմբվածությունը՝ դա նրա համախմբվածությունն ե կուսակցության գլխավոր գծի շուրջը, նրա լմնինյան կենտրոնի շուրջը՝ կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ: Համախմբել մարտիկներին կուսակցության գլխավոր գծի շուրջը—սա յե քաղաշխատանքի խնդիրը ԲԴկբություն: Միայն սրա հիման վրա մարտիկը կկարողանա իր բոլոր ջանքերով, ննուուղիաղմով նվիրվել մարտական պատրաստության գործին, պրոլետարական դիկտուրայի, սոցիալիստական շինարարության պաշտպանության, ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթանակի համար մզվող պայքարի պատրաստության գործին:

Մարտական պատրաստությունը—դա հիմնականն է, գլխավորը, վորի համար աշխատավորը կանչված և կարմիր բանակ: Դրա համար մարտական պատրաստությունը դրված ե կարմիր բանակի վողջ քաղաքական աշխատանքի կենտրոնում:

Իր դասակարգային խնդիրները հասկացող գիտակից բանվորն իր բոլոր ուժերը տալիս և արտադրությանը: Նա գիտե, վոր ապրանքի յուրաքանչյուր հատիկ, գաղղահի յուրաքանչյուր պառույտ ամրացնում սոցիալիզմ կառուցող Խորհրդային յերկրի հզորությունը, հարված և հասցնում դասակարգային թշնա-

մուն : Կոլտնտեսականը , վորն ըմբռնում է նաև աշխատավոր դյուզացիության խնդիրները , դաշինք կտպած բաննվորների հետ և նրանց զեկավարությամբ , իր բոլոր ուժերը նվիրում է կոլտնտեսական արտադրությանը : Նա դիտե , վոր հացահատիկի , բամբակի , կանեփի , յուղի , մսի յուրաքանչյուր կիլոգրամն ամրացնում և սոցիալիզմ կառուցող Խորհրդային յերկրի հոգրությունը , հարված և հասցնում նրա թշնամիներին , վոր կոլտնտեսությունների ամրապնդումը կործանում և ըերում շահագործող դասակարգերի վերջին մնացորդներին — կուլակությանը :

Գիտակից կարմիր բանակայինն իր բոլոր ուժերը պետք է տա մարտական ուսուցմանը : Նա պետք է հասկանա , վոր նրա մարտական ուսուցման ամեն մի հաջողություն ամրացնում և սոցիալիզմ կառուցող ԽՍՀՄ-ի պաշտպանության հզորությունը , վոր տիրապետելով ուղղմական դործին , նա պայքարում է սոցիալիզմի հաղթանակի համար , համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար : Նշավակին ուղղված այսորվաշետական ձիգը , վաղը կդառնա շեշտակի կրակ դասակարգային թշնամուն : Այսորվաշ հաջող տակտիկական պարապմունքը վաղը կդառնա հաղթանակ սպիտակ գվարդիական շների գեմ մղած ճակատամարտերում : Գերազանցապես ուսումնասիրված , ուշադրությամբ ու ինսամքով պահված գնդացիրը , տանկը , ինքնաթիրուը վաղը հաղթականորեն կպաշտպանեն Մաքմատոդրսկու հնոցներն ու Դնեպրոպետի պատվարը , կոլտնտեսական գուշտերը և Դոնի հանքահորերը :

Մարտական ուսուցան ամեն մի հաջողություն , — հարված և թշնամուն , ԽՍՀՄ-ի և ամբողջ աշխարհ :

աշխատավորների հաղթության դրավականը , պրոլետարական դիկտատուրայի անխորտակելի հզորության դրավականը : Ահա թե ինչու դաստիարակելով մարտիկի դաստիարակյին դիտակցությունը , համախմբելով նրան կուսակցության զեկավարության և նրա դիմադրու գծի շուրջը , կուսաքաղաքական աշխատանքը ԲԳԿԲ-ում : Դրանով հենց մոբիլզացիայի յե յենթարկում նրա բոլոր ֆանիքները կարմիր բանակի մարտական ուսուցման ավանների կատարման և զերակատարման համար : Կուսաքաղաքական աշխատանքը հզոր գործիք և ԲԳԿԲ-ի մարտունակությունն ամրապնդելու գործում : Նա գաստիարակում է կարմիր բանակայինին վորպես խորհրդային իշխանության տոկուն պաշտպանի , բանվոր դաստիարակը համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար անձնուրաց մարտնչողի :

Այսպես են քաղաքատանքի խնդիրները ԲԳԿԲ-ում : Քաղաքացիական պատերազմի փորձը ցույց է տալիս , թե ինչ հսկայական զեր և խաղում կուսակցական քաղաքական աշխատանքը կարմիր բանակի մարտունակությունն ամրացնելու գործում : Քաղաքացիական պատերազմի տարիներին կուսակցությունը հսկայական քաղաքական աշխատանք ծավալեց բանակում : Կարմիր բանակայինը , հրամանատարը միշտ պարզ ու վորոշ գետելին , թե ինչ բանի յե ձգտում և ինչ ե բերում բանվորներին ու աշխատավորներին դաստիարակյին թշնամու բանակը : Մարտիկները մշտապես իրազեկ ելին Խորհրդացային իշխանության բոլոր միջնորդառումներին և տեսնում են , վոր այդ իշխանությունը շատ ուժեղ կերպով պաշտպանում է աշխատավորության շահերը : Դրա համար ել նրանք վատահությամբ ելին զնում մարտի և

Հերոսարար պաշտպանում խորհուրդները : Պատահում եր այնպես, վոր գասակարդային թշնամու աղջեցության տակ ընկած, հոգով ընկած առանձին կարմիր բանակացին զրոբաման անմարտունակ եր դառնում : Բայց հենց վոր կուսակցությունը կարգավորում եր նրանում կուսակցական աշխատանքը, նույն այդ զորամասը ցույց եր տալիս տոկունության և հերոսության որինակները կուսակցությունը քաղաքական լայն աշխատանք եր տանում հակառակորդի դորֆերի մեջ : Միշտ ու ամեն տեղ դրա հետեանքով գեներալների կողմից խարիսք և զորակոչված դյուլացիներն սպիտակ բանակից փախչում, անցնում եյին մեր կողմը և դառնում կարմիր բանակի արիասիրտ մարտիկները :

Քաղաքական աշխատանքը բանակում տարվում է տարբեր ձևերով : Նրա հիմնական ձևերից մեկը հանդիսանում է քաղաքարապմունքը : Այդ քաղաքարապմունքներն կարմիր բանակայինը հնդորյակում յերկու անդամ սիստեմատիկորեն ուսումնասիրում է կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականության հիմնական հարցերը միջազգային հեղակիուսական շարժման խոդիրները, կարմիր բանակի խոդիրները :

Միջազգային և ներքին հյանքի բոլոր ընթացիկ դետքերի և կուսակցության ու Խորհրդային իշխանության նոր գորոշումների վերաբերյալ բացատրությունները կարմիր բանակայինն ստանում են հենց ժողովներում, միտինդներում, դրույցներում, ընթացիկ քաղաքականության խմբակներում, թերթերում (վաշտի, գնդի, շրջանային և կենտրոնական) : Ակումբները և լենինյան անկյունները կազմակերպում են մարտիկի պատառ ժամանակը, տալով նրան խելացի և ոպտակար

զվարճություններ (ներկայացումներ, կինո, խաղեր և այլն) : Քաղաշխատանքն այնպես և կառուցվում, վոր վոչ միայն սովորեցնի մարտիկին, այլ և զարգացնի նրա ակտիվությունը, նրանից պատրաստի կուսակցության ոգի և Խորհրդային իշխանության ագխոստորնում պրոպագանիչատը : Կարմիր բանակայիններն իրենք են զեկուցումներ տալիս, յելույթներ ունենում ժաղովներում, մասնակցում են թերթերին, կազմակերպում ներկայացումներ և այլն :

Յերկու տարիվա աշխատանքից հետո նույնիսկ այն մարտիկը, վորը բանակ եր յեկել կիսագիտակից, վոչ ակտիվ, այնտեղից վերադառնում և վորպես կուսակցության ոգի մարտական առաջնորդ, սոցիալիզմի ակտիվ և գիտակից կառուցող :

## 12. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ե

Բանակից վերադարձած մարտիկները չափ ազատ հեղինակություն են ձեռք բերում դործարանում և դյուզում : Նրանք դառնում են իսկական առաջնորդություններ արտադրության մեջ և քաղաքական կյանքում :

Բոլորին հայտնի յե, վոր կարմիր բանակը հսկայական գեր խաղաց դյուզատանտեսության կոլեկտիվացման ասպարիզում : Արձակուրդավոր—կարմիր բանակայիններ անձնական որինակով, կուսակցության քաղաքականությունը բացատրելով, իր հետեւց կոլեկտիվացման ժանապարհի վրա գրավեց տասնյակ ու հարյուրավոր շշխատավոր գյուղացիների : Կուտնաեսությունների վարչությունների, գյուղիսուրդների, շրջգործկոմ-

Ների նախաղահների հսկայական մասը նախկին կարմիր բանակայիններ են, վորոնք բանակումն են անցել իրենց քաղաքական վարժեցումը:

«Բանակի միջոցով, —ասում ե ընկ. Վորոշիլովը, — մենք տարածում ենք կոմունիստական կուսակցության ազդեցությունը բանվորների և գյուղացիների բազմամիլիոն մասսաների վրա»: Դեռ ևս 1923 թվին ընկ. Ստալինն ընդդում եր, վոր Կարմիր բանակը . . . «սա միակ հավաքի կայանն ե, վորոնեղ իրարից կորված տարրեր նահանդների բանվորներն ու զյուղացիները խմբվում են և խմբվելով, դարձնում են իրենց քաղաքական միտքը . . . .

Բանակը բանվորների և զյուղացիների դպրոցն ե, չափաքի կայանը և այդ տեսակետից կուսակցության ազդեցությունը բանակի վրա ունի վիթխարի նշանակություն և այդ իմաստով բանակը մի խոշորագույն ապարատ ե, վորը միացնում ե կուսակցությանը բանվորների և չքայլորազույն զյուղացիության հետ»:

### 13. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԸԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Կուսակցական-քաղաքական ամբողջ աշխատանքը բանակում ղեկավարում է կուսակցությունը:

Բանակի իր ղեկավարությունը կուսակցությունը կենսագործում է Հեղափոխական Ռազմական Խորհրդի, Քաղաքական վարչության և քաղաքաժինների միջոցով, կոմիսարների և հրամանատարների միջոցով, զորամատերի կուսակցական կազմակերպությունների միջոցով:

ԲԳԿԲ-ի կուսակցական բջիջների աշխատանքն ուղղված է ամբացներու մեր բանակը, վորպես պրոլետարական դիկտուրայի գործիքը: Կուսակցական բջիջներն ակտիվ կերպով ողնում են պետկազմին մարտիկների քաղաքական և մարտական դաստիարակության աշխատանքում: Կարմիր բանակի քաղմարմինները վարում են վողջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքը, ղեկավարում են նրա կուսակցական կոլեկտիվ և կոմյերխումիութենական կազմակերպությունները: Կազմելով Կարմիր բանակի Վարչության ապարատի մասը, քաղաքաժինները միաժամանակ հանդիսանում են կոմունիստական կուսակցության մարմինները: Քաղմարմինների աշխատանքները ղեկավարվում և դիմավորվում են ԲԳԿԲ-ի Քաղաքական վարչության կողմէց: ԲԳԿԲ-ի Քաղաքական վարչության գլուխ և կանոնած ԲԳԿԲ-ի քաղաքական վարչության պետ ընկ. Յամ Բորիսվիչ Դամարինիկը, վորը միաժամանակ հանդիսանում է Շովկային գործերի Ժողկոմի և ԽՍՀՄ ՀԽԾ նախագահի տեղակալը:

Բանակի յուրաքանչյուր ստորագրաժաման մեջ, վաշտից վոչ ցած, վորոնեղ աշխատում են 3-ից վոչ պակաս կուսակցական անդամներ, կա կուսակցական բջիջ (դպրոցներում և բուհներում, բջիջներ կան նաև դասականերում): Բջիջի գլուխ և կանոնած նախագահնությունը կամ քարտուղարը (յերբ բջիջում կան 7-ից պակաս անդամներ): Զորամասի բոլոր բջիջները միացվում են կոլեկտիվի մեջ, վորն ընտրում է բյուրո և վերջինս ղեկավարում է աշխատանքը:

Հրամանատարական կազմի և քաղաքաբարստի հետ մասնակի կազմակերպությունները մասնակի կուսակցական բարեկարգության մեջ մտնելով գանձութական պահպանություն ունենալու համար կազմակերպությունները մասնակի կուսակցական բարեկարգության մեջ մտնելով գանձութական պահպանություն ունենալու համար կազմակերպությունները:

Հանդիսանում ե բանակի կազմակերպող և զեկավարող  
հիմնական ուժերից մեկը։ Կուսակցական բջիջներն  
երենց աղղեցությամբ ընդգրկում են զորամասի կրանքի  
ու կենցաղի բոլոր կողմերը։ Բջիջի անդամները և վողջ  
բջիջն ամբողջապես ամենասերտ կերպով կապվում են  
կարմիր բանակի բջիջների հետ, ուսումնասիրում են  
նրանց կարիքները, տրամադրությունները, պահանջնե-  
րը։ Կարմիր բանակի բջիջների բոլոր աշխատանքների  
կենտրոնում դրված են մարտական պատրաստության  
հարցերը։ Դրա հետ կարմիր բանակի կուս-  
կաղմակերպությունները հատուկ ուշադրություն են  
դարձնում տեխնիկային տիրապետելու խնդրի վրա, վո-  
րը կարմիր բանակի մարտական պատրաստության  
կենտրոնական խնդիրն ե։ Մեծ ուշադրություն են դարձ-  
նում բջիջները պետկազմին, նրա հրամանատարական  
ուսուցմանն ոգնելու գործի վրա։ Բոլոր կուսակցական  
բջիջներն ակտիվ պայքար են մղում կարմիր բանակի  
կարդապահությունն ամրացնելու համար։ Նրանք մո-  
բիլիզացիայի յեն յենթարկում կարմիր բանակայիննե-  
րի հասարակական կարծիքը կարդապահությունը խախ-  
տողների գեմ։ Կուսակցության բջիջներն աշխատում են  
ամրացնել հրամանատարի և նրա հրամանի հեղինակու-  
թյունը։ Մարտական պատրաստության ասպարիցում  
առանց մարտիկի քաղաքական դաստիարակության ա-  
մեն կերպ բարձրացման վոչ մի հաջողություն հնարա-  
վոր չե։

«Վորքան ավելի բարդ ու դժվար են մարտական  
պատրաստության խնդիրները, —ասում ե ընկլ. Գամար-  
եիկը, —վորքան ավելի մեծ յետանդ ու սեպմում ե հար-  
կավոր այդ խնդիրների լուծման համար, այնքան ա-  
վելի մեծ ուշադրություն պետք ե նվիրել շարքային»

մարտիկի և հրամատարի բաղաքական դաստիարակու-  
թյանը, նրանց բաղաքական մորիլիզացիային՝ մարտա-  
կան տեխնիկային, հրաճային գործին և մարտական  
պատրաստության մյուս խնդիրներին տիրապետելու  
համար։ Հրամատարությանը ցույց տված իսկական  
ակտիվ, կոնկրետ ոգնությունը մարտական պատրա-  
ստության հարցերում պետք է ամենասերտ կերպով կա-  
պակցված լինի մարտիկի և հրամատարի բաղաքական  
ու կուտուրական դաստիարակության ուժեղացման ու  
քարելավման հետ։ Այդ յերկու խնդիրները մեր բանա-  
կում սերտորեն կապված են, միանում, մեկ խնդիր են  
դառնում։ Դրանց բաժնեւ չի կարելի, դրանց մաս մաս,  
յաւրաքանչյուրն առանձին լուծել չի կարելի։ Յերկու  
խնդիրն ել պետք է լուծել, ինչպես մեկ խնդիր»։

«Նական ե, վոր քաղաքական պատրաստության  
հարցերը հանդիսանում են բջիջի մշտական կարեորա-  
գույն հոգուր։ Բջիջն ուսումնասիրում և քաղաքական  
պարապմունքների, կուսլուսավորության, մասսայական  
աղիտացիոն աշխատանքների ընթացքը, նշում նրանց  
բարելավման միջոցառումներ, կոմունիստների ուժերով  
ակտիվ կերպով կյանքում կիրառում այդ բոլոր վորո-  
ցումները։

Բջիջի աշխատանքի հիմնական մեթոդը հանդիսա-  
նում ե նրա անդամների անձնական որինակելիությու-  
նը մարտիկի քաղաքական դաստիարակության և մար-  
տական պատրաստության բարձր տեմպերի և նրա վո-  
րակի համար։ Կոմունիստը, կուսակցության թեկնա-  
ծուն պարտավոր ե ինքն որինակ ծառայել մարտական  
և քաղաքական ուսուցման բոլոր ասպարեզներում, կար-  
գապահության մեջ, հասարակական աշխատանքում։

«Այն կոմունիստները և կոմյերիտականները, վորոնիք որինակելի ուղղմական կարգապահության որինակ չեն հանդիսանում, արժանի չեն կուսակցության և լենինյան կոյերիտիտթյան անդամի կոչմանը»: Այսպես են ասում բջիջների քարտուղարների Յ-րդ համարանակային, խորհրդադաշտության վորոշումները: Յեղբանակի կուսակցմակերպությունը հաջողությամբ պայքարում և այդ պահանջները կատարելու համար: Զորամասերի և ստորաբաժանումների մեծ մասում կոմունիստները զնում են կարմիք բանակային վողջ մասսայի առջևից, որինակելի կերպով կատարելով իրենց պարտականությունները, սոցմքակցության և հարվածայինյան կուսակցության ամենակայուն ջոկատներից մեկը և նրա կենտրոնական կոմիտեյի վատահելի հենարանը: Բանակային բալլյարկիները վճռականորեն պայքարել են և պայքարում են ոպորտունիզմի բոլոր և ամեն տեսակի յերեսությների դեմ, կուսակցության գըլխալոր գծի համար: Նրանք խորտակիչ Հակահարված տվին տրոցկիզմին, վորը զլորվել է բուրժուական Հակահեղափոխության լադերը: Նրանք անհաշտ պայքար են մզում աջ թերթան դեմ, վորն այժմ Հանդիսանում է գլխավոր վտանգը, «ձախ» ուղորտունիզմի դեմ, կուսակցության գծից թեքումների նկատմամբ հաշտվողականության դեմ:

Այդ պայքարում բանակի կուսակցական կազմակերպությունն իր յետելց և տանում կարմիք բանակայինների և հրամանատարների վողջ մասսային, հաջողությամբ մոբիլիզացիայի յենթարկելով նրան բանակի մարտական և քաղաքական պատրաստությունն անընդհատ բարելավելու համար, ԽՍՀՄ-ի պաշտպանումա-

կությունն ամբացնելու համար: Վոչ մի կասկած չկա, վոր բանակային կուսակցմակերպությունը և այսուհետեւ կմնա թնդնդիների միաձույլ ջոկատը: Կուսակցական կազմակերպության վիթխարի հեղինակության մասին բանակում վկայում և նրա շարքերի անընդհատ աճումը կարմիք բանակայինների և հրամանատարների հաշվին: Այդ բանը յերեսում և հետեւյալ թվերից:

#### ՀԿՐԽՍԿՑԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱԾ

Առ 1-ն ապրիլ 1925 թ. 12,1 տոկոս	Առ 1-ն մարտի 1932 թ. 30 տոկոս	Առ 1-ն ապրիլ 1925 թ. 10,7 տոկոս	Առ 1-ն մարտի 1932 թ. 20 տոկոս
--	--	--	--

Մի շարք ամփացիոն, մոտոմեխանիկական դրամական ծովագիտում, ծովային նավատորմում կուսակցության, կոմյերիտիության անդամների տոկոսը հասնում է շարքային կազմի 75—80 %-ին:

Յուրաքանչյուր անկուսակցական կարմիք բանակային իր բջիջի մեջ պետք է տեսնի կուսակցական կազմակերպությունը, վորը զեկավարում և վողջ սացիալիստական շինարարությունը և ԽՍՀՄ-ի պաշտպանությունը և ամեն կերպ և ամեն ոգին բջիջի աշխատանքներին, աշակեցի նրա բռնոր հենարկումներին: Կուսակցության քիջը կարմիք բանակի մարտիկի առաջին բանեկամն և ու դեկավարը: Իր աշխատանքներում բջիջը հենվում է լավագույն դիտակից մարտիկների, մարտական ուսուցման Հարվածայինների վրա: Բանվորներից, բատրակներից, կորոնտեսականներից քաղաքականացեալ ողաբանության մասին կարմիք բանակային Հարվածայիններին բջիջը քաշում և կուսակցության շարքերը:

13. Կոմյերիտմիուրյանը կուսակցուրյան  
ոգնականն ե

Բանակի բոլոր ստորաբաժանումներում վաշտից վոչ ցածր (իսկ դպրոցներում դասակաց) կան կոմյերիտմիութենական բջիջներ: ԿԿՅԵՄ-ը կուսակցության ամենամոռ ողնականն ե: Քաղաքացիական պատերազմի տարիներին կոմյերիտականները մարտնչող բանվորների և դյուղացիների առաջին շարքերումն եյլն: Կոմյերիտականների ուղմանակատում կատարած մարտական աշխատանքների համար ԼԿՅԵՄ-ն ԽՍՀՄ-ի կենտղործկոմի կողմից պարզեատրված ե Կարմիր գրոշի չքաշանով:

Դործարանում, խորհուտեսության և կոլտնտեսության մեջ կոմյերիտականը հանդիսանում է սոցմրցակցության սկսողը, արտադրության առաջատարը: Յերիտասարդության վորոնող միտքը տվել է մեր հանրապետությանը հարյուր հազարավոր ռացիոնալիզատորական առաջարկություններ, դյուտեր և այլն: Կոմյերիտմիությունը քաղաքական դպրոց և միլիոնավոր աշխատավոր յերիտասարդության համար, վորտեղ նրանք ստանում են մարտական սոցիալիստական կովկածություն, լենինյան դաստիարակություն:

Այդ խնդիրները կոմյերիտմիության առաջ կանգնած են նաև Կարմիր բանակում: Կոմյերիտականներն այժմ բոլոր կարմիր բանակայինների մեկ քառորդ մասից ավելի յեն: Նավատորմումն վարին շեֆութուն և անում կոմյերիտմիությունը, այդ տոկոսն ավելի մեծ է: Սրանից հանկանալի յե, թե ինչ հոկայտական դեր է խաղում կոմյերիտմիությունը մարտիկի քաղաքական և մարտական պատրաստության դործում:

8

«Կոմյերիտմիության կազմակերպությունների կարևորագույն խնդիրը բանակում հանդիսանում է կոմյերիտականների որինակելիությունը մարտական և քաղաքական ուսուցման մեջ, ուազմական տեխնիկային տիրապետելու և պահպանելու մեջ, զինվորական կարգապահության մեջ, կարգապահական զանցանների լիակատար լիկվիդացիա կոմյերիտմիության շարժերում», —այսպիսի խնդիր գրեց կոմյերիտմիությունը առաջ բջիջների քարտուղարների Յ-րդ համարանակային խորհրդակցությունը:

Ոգնելով կուսակցությանը մարտիկների քաղաքական դաստիարակության մեջ, պայքարելով կոմյերիտականների որինակելիության համար մարտական պատրաստության գործում, կոմյերիտմիությունը պատվով է կատարում այդ խնդիրները:

Կոմյերիտմիությունը լայնորեն իր շարքերն ե գրավում կարմիր բանակայինների: Նա իր խնդիրն ե զնում ընդդրկել բոլոր կարմիր բանակային—բանվորներին: Միաժամանակ նա ձգտում է ել ավելի լայնորեն ներգրավել իր շարքերը կոլտնտեսականներին և լավագույն կարմիր բանակային—մենատնտեսներին մարտական և քաղաքական ուսուցման հարվածայիններին:

14. Յերիտասա'րդ մարտիկ, յեղիր պրոլետարական դիկտուրայի բանակի հարվածայինների առաջին շարքերում

Յերիտասա'րդ մարտիկ դու յեկել ես գործարանից, խորհրդանտեսությունից և կոլտնտեսությունից: Դու այնպես կովում եյիր հնդամյակը չորս տարում կատարե-

89

լու համար, աշխատանքի արտադրողականության համար, դաշտերի բերքատվության համար:

Սոցիալիստական մրցակցությունն ու հարվածագնությունը քո աշխատանքի մեթոդն եր: Նրա ովնությամբ դու հաղթանակում եյիր: Հիշիր, վոր սոցմրցակցությունն ու հարվածայնությունը ծառայում են կարմիր բանակի մարտունակության ամրացման գործին: Յեզիր մարտական և քաղաքական ուսուցման հարվածայինների առաջին շարքերում:

«Սոցիալիստական մրցակցության սկզբունքը, —ասում ե ընկ. Ստալինը: — առաջակրթությունի կողմից յետամացներին ցույց տրվող ընկերական ագնությունն ե, ընդհանուր վերելքի հասնելու համար: ...»

Այս սկզբունքն ամրողապես կիրառելի յէ նաև Կարմիր բանակում: Սոմբցակցությունն ու հարվածայնությունը տեմպերն ուժեղացնելու, մարտական պատրաստության վրակը բարելավելու զորեղ գործիքն են:

Առաջին դասակը լավ ե կրակում: Յերկրորդը յետ և մնում: Առաջին դասակի մարտիկները յերկրորդին մրցության են կանչում հրաձուական պատրաստության մէջ: Դասակի ջոկի լավագույն հրաժիգները վերցնում են յետամացների շփությունը: Կարմիր բանակային Պետրոսյանն ովնում ե կարմիր բանակային Մարկոսյանին: Դասակի հրաժիգնատարեց նա իմացավ, վոր Մարկոսյանը հրաձության ժամանակ չի կարողանում ողտվել փոկից: Աղատ ժամանակ Պետրոսյանը Մարկոսյանի հետ դուրս յեկավ դաշտ, զորանոցի յետեւ—և ովնում ե նրան սովորելու հրաձության ժա-

ժանակ ողտվել փոկից: Կարմիր բանակային Խաչատրյանը յետ և մնում Պետրոսյանից քաղաքարապետությին: Պետրոսյանը կանչեց Խաչատրյանին սոցմրցակցության: Նա բացատրում ե նրան անհասկանալին, նրանք միասին դիրք են կարդում:

Սիմոնյանն իրեն հարվածային հայտարարեց: Նա կապավոր ե: Կարմամանակամիջոցում նա կատարելության հասավ Մորդեյի այրութեն ուսումնասիրելում: Նրա ապարատը միշտ սարքին ե: Վաշտի թերթը պատմեց, թե Սիմոնյանն ինչպես հասավ այդ արդյունքներին: Սիմոնյանին հավասարվում ե դասակը: Նրա աշխատանքի հարվածային մեթոդը ընդորինակում են մնացածները: Ուսուցման ամեն մի բնագավառում խոցմրցակցությունը պետք ե կիրառվի վորքան կարելի յեւայն:

Սոցիալիստական մրցակցությունը բանակում զեկավարում ե գրամանատարը: Նա վորոշում և սոցմրցակցության որյեկտներն ու նորմաները, հենց նա յել վորոշում ե թե, վոր մարտիկը, վոր ստորաբաժանումը ցույց տվին լավագույն որինակներ, հաղթողը հանդիպացան սոցմրցակցության մեջ:

«Զինվորական մասերում, —ասվում ե բջիջների ժարուղարների Յ-րդ համարանակային խորեգակցության վորոշման մեջ, —պեսք ե ամեն կերպ զարգանան սոցմրցակցության այնպիսի ձևերը միայն, վարդմբ բարձրացնելով մարտական և հաղաքական պատրաստությունը, ամրացնելով զարմանակ գինուրական կարգապահությունը, բարձրացնում են հրամատարի հեղինակությունը,

ամբացմում են նրա հրամանատարական կամքը և  
ոգնում նրան դեկալարելու մարտական ռւսուցու-  
մը»:

Կուսակցական և կոմյերիտմիութենական բջիջնե-  
քըն, առանձին կուսակցականները և կոմյերիտականները  
պետք ե լինեն սոցմրցակցությունն սկսողները, գնան  
բանակի հարվածայինների առաջին շարքերում։ Միայն  
այս դեպքում նրանք կարդարացնեն լենինցինների բարձր  
կոչումը։

Սոցմրցակցության ծալվալման հետ սերտորեն կապ-  
ված ե ոսցիոնալիզատորական շարժումը բանակում։  
Մարտիկը և հարվածային-հրամանատարը համառորեն  
մտածում են այն մասին, թե ինչպես ավելի լավ պահեն  
գենքն ու տեխնիկան, ինչպես ավելի լավ կազմակեր-  
պեն ուսուցումը, վորակեսողի բարձրացնեն բանակի տեմ-  
պերը և պատրաստման վորակը։ Նրանք մտցնում են  
իրենց առաջարկությունները, հնարում են նոր պարա-  
գայք ու հարմարանք և այլն։ Այդ գյուտերը կամ առա-  
ջարկությունները հրամանատարի նայելուց և հավանու-  
թյուն տալուց հետո կիրառվում են կյանքում։ Մեր  
բանակն ունի մարտիկների հարյուրավոր և հաղարա-  
վոր այլպիսի առաջարկություններ և գյուտեր, վորոնք  
ակներև կերպով ողնեցին նրա մարտական հղորության  
կատարելագործմանը։ Յուրաքանչյուր մարտիկ պետք ե  
լինի գյուտարարական և ոսցիոնալիզատորական աշ-  
խատանքների ակտիվ մասնակիցը։ Ել ուրիշ վո՞ր բա-  
նակում, բացի Կարմիր բանակից, կարող ե դարձանալ  
սոցմրցակցությունն ու հարվածայնությունը, մասսա-  
ների ուսցիոնալիզատորական աշխատանքը։ Բուրժուա-  
կան բանակի դիտակից զինվորը տանել չի կարողանում

զորանոցը։ Նա չի հողա բանակի մարտական հղորու-  
թյունն ամբացնելու մասին, վորն ոգտագործվում և ի-  
րան իսկ ճնշելու համար։ Միայն աղատագրված բան-  
վորների և դյուղացիների բանակումն և հնարավոր  
մարտիկների ենտուղիազմը մարտական և քաղաքական  
աւսուցման մեջ։ Նրանք գիտեն, վոր աշխատում են հա-  
նում աշխատավորների հարազատ շահերի, և վոչ թե  
կապիտալիստների դավագանի տակ։

«Ամենից ուշագրավը սոցիալիստական մրցակ-  
ցուրյան մեջ, —ասում ե ընկ. Ստալինը, —կայս-  
եռում ե նրանում, վոր նա արմատական հեղաշրջում  
և առաջացնում մարդկանց հայցքների մեջ դեպի  
աշխատանքը, վորովիեսու նա՝ աշխատանքն անար-  
գանքի և ծանր բեռից, ինչպես նա համարվում եր  
առաջ, վեր ե ածում պատվի գործի, փառքի գործի,  
արիուրյան և հերոսուրյան գործի»։

Գործարանների և դաշտերի հարվածայիններ, դե-  
պի պրոլետարական դիկաստուրայի բանակի հարվածա-  
յինների առաջին շարքերը։

#### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱՆ

##### 1. ՏԵԽՆԻԿԱՅԻ ԴԵՐԸ ԱՊԱԳՎ ՊԱՏԵՐԱԳՄՈՒՄ

Ապագա պատերագմում, վորը պատրաստում են մեր  
գեմ կապիտալիստները, Հսկայական դեր պետք ե խա-  
ղան ռազմական տեխնիկան, կովի տեխնիկական միջոց-  
ները։ 1914—1918 թ.թ. Համաշխարհային պատերազմը  
պատճառ դարձավ ռազմական տեխնիկայի հսկայական  
աճման։ Յերեան յեկան եւ ավելի մեծ քանակությամբ  
գնդացրեր, ընդ վորում բացի հաստոցավոր գնդացրե-

րից, սկսեցին դործաղրել նաև ձեռքի գնդացրերը, սկսեցին դործաղրել ծանր ու հեռահար նոր տեսակի թընթանիթների, հոբեցներ: ՄԵծ արագությամբ աճեց գանգիթների, հայտնիեցին տանիերը: Բացի այս ավելիցիւն: Հայտնիեցին տանիերը: Հայտնիեցին պատերութից, կաղիտալիստները համաշխարհային պատերազմի ժամանակ սկսեցին դործաղրել մարտական թուրազմի ժամանակ սկսեցին դործաղրել մարտական թուրազմի նյութեր: Վերջապես դորքերի տեղափոխության ամվոր նյութեր: Համար մեծ չափով սկսեցին կիրառել ավտոմոբիլներ: Համաշխարհային պատերազմից հետո, չնայած կապետալիստների վիճաթափման մասին ամբողջ դատարկախոսություններին, այդ դատարկախոսությունների քողի տակ կաղիտալիստական յերկրներում ռազմական տեխնիկան անընդուած անում ու կատրելագործվում է:

Կիթիարի չափով աճել եւ ժամանակակից կազիտալիստական բանակների կրակային հզորությունը: Համաշխարհային պատերազմի ժամանակի հրացանը դիրքություն էր մինչև 10 ձիգ, իսկ ժամանակակից կիսավտոմատը տալիս ե մի բողեյում 100 ձիգ: Գնդացիների թիվը Ամերիկայում ավելացել է 1914 թ. 300-ից մինչև 25 հազարի 1930 թ. այսինքն՝ Համարյա ավելացել է 20 անգամ: Անդիւայում՝ 900-ից մինչև 35 հազարի. այսինքն՝ 27 անգամ: Անդիւայում՝ 900-ից մինչև 13 հազարի. այսինքն՝ 14 անգամ: Դրա հետ միասին նշանավոր չափով աճել ե հրաձգության դիպուկությունը, Հանարված են մի չարք ապարատներ զիստոկ հրաձգության համար: Գնդացրողները սովորել են հրաձգել փակ դիրքերից, այսինքն՝ անտեսանելի ինքնուամ հակառակորդի համար: Ավելացել ե հրետանական համանօթների քանակը. Ամերիկայում՝ 144-ից.

1914 թ. մինչև 3 հազարի 1930 թ. այսինքն՝ 20 անգամ: Ֆրանսիայում հազար 500-ից մինչև 3 հազարի, այսինքն՝ 2 անգամ:

1914 թից մինչև 1930 թ. ժամանակում ավագա-

նակների թիվը շարքում ավելացել է:

Հ. Ա. Միացյալ Նահ. — 6-ից 3 հազար. այսինքն՝ 500 անգամ:

Ֆրանսիայում՝ 138-ից 2 հազ. 700. այսինքն՝ 19 անգամ:

Անգլիայում՝ 90-ից հազար 500. այսինքն՝ 15 անգամ:

Իտալիայում՝ 20-ից 900. այսինքն՝ 45 անգամ:

Յապոնիայում՝ 9-ից 800. այսինքն՝ 89 անգամ:

Այս կաղիտալիստական յերկրների բանակներից յուրաքանչյուրը ներկայումս ունի հարյուրավոր անգամ համարական անուածություն:

1914—1918 թ. Համաշխարհային պատերազմի ժամանակ պատերազմող պետությունները լույսորեն կիրառեցին թունավոր նյութերը: Վոչ մի կասկած չկա, վոր կաղիտալիստները թունավոր նյութեր կդորձաղրեն նաև ապագա պատերազմում: ԶԵ՞ վոր հենց խաղաղ ժամանակ ամերիկական, գերմանական, լեհական բուրժուազիան կիրառում ե խեղզող զագերով ռումբեր անզեն բանվոր ցուցարարների վեմ: ԶԵ՞ վոր հենց այժմ ել Ամերիկայում, Ֆրանսիայում, Լեհաստանում, Գերմանիայում և այլն հսկայական քանակությամբ արտադրվում են թունավոր նյութեր: ՄԵծ չափով զարգացել են կապի նորագույն միջոցները: Բաղիո-կայանները, գործնք խմելիքի իստական պատերազմի սկզբին բանակներում միավորներով եյն հաշվիում, այժմ տառականներում են հաշվվում:

Թաղմական տեխնիկան միայն քանակագեռ չե, վոր աճում ե: Նա կտտարելագործում ե իր մարտական հատկությունները, ինչպես այդ տեսանք հրացանի, դնդացրի մասին որինակ բերելիս: Յետ չի մնում նաև հրետանին: Բարձրանում ե նրա արագածությունը: Հնարում են նոր հրանոթներ—հակատանկային, զենիթային հրանոթներ: Աճում ե արկի թռիչքի հասողությունը:

Առաջին տանկերն անցնում եյին մի ժամում 10 կիլոմետրից պակաս արագությամբ: Ժամանակակից տանկը կարող է առաջ ընթանալ մի ժամում 40—60 կիլոմետր արագությամբ, իսկ լավ ճանապարհներով դեռ ել ավելի: Կատարելագործվում են նաև զրահավոր մեքենաները: Յերեան են յեկել վեցանվանի դրահապատճեր, վորոնք կարող են շարժվել վատ, դժվար անցանելի ճանապարհներով: Անընդհատ կատարելագործվում ե նաև ավիացիան: Մայված են հոկայական ոմբատար սալվանակների նոր տեսակներ: Այդպիսի 10 սալվանակների ջոկատը կարող է թափել 20 տոնն (հազար 200 կոտ) պայթուցիկ նյութեր:

Մեծ նշանակություն ե ստանում ավտոմոբիլը, վորպես զորքերը փոխադրելու միջոց, վորպես արկեր և այլն տեղափոխելու միջոց: Ամբողջ բանակներ կարճ ժամանակում կարելի յե տեղափոխել մեծ հեռավորությունների վրա:

Կանոնական ձեռք բերածք վրա, կապիտալիստները խոչոր աշխատանք են տանում հետազայում պատերազմի տեխնիկան կատարելագործելու համար: Լարուատորիաներում և փորձի արհեստանոցներում հայուրավոր գիտնականներ և գյուտարարներ զբաղված են այդ աշխատանքով:

Սակայն սիալ կլիներ կարծել, վոր տեխնիկայի զարգացման չնորհիվ, ապագայի պատերազմը կարող է լինել առանց մասսայական միլիոնավոր մարդկանց թվով բանակների:

«Ապագա պատերազմը, —ցույց եր տալիս կոմիտենի գործկոմի պլենումը դեռևս 1927 թ., — այդ մեքենայացված պատերազմ է: Ցուրաքանչյուր յերկիր վեր կածվի կործանիչ միջոցների մի հըսկայական գործարանի: Մեքենայացված սպանության գործում վճռական տեղը կապտկանի մատորին: Սակայն հատկապես նրա համար, վոր ուազմական տեխնիկան հասել և զարգացման բարձրագույն աստիճանին, կապիտալիստական պետությունները հարկադրված կլինեն հոկայական մասներին նետել ուղիմական գործողությունների ույացնելը»:

Կապիտալիստական յերկրների ամբողջ ռազմական պատրաստությունն է հաստատում այդ ցուցումը: Արդեն այժմ ֆրանսիսն, Անգլիան, Ամերիկան, Խոտլիան և Յապոնիան ունեն, բայց բազմամարդ մշտական բանակներից, 20 միլիոնից ավելի սովորած պահեստայիններ: Եստոնիան, Լեհաստանը, Ռումինիան, Ֆինլանդիան և Լատվիան ունեն վոչ պակաս 5 միլիոն պահեստայիններ: Նրանց մշտական բանակներն աճում են: Առանց հոկայական բանակների ապագա պատերազմում չի կարելի յոլա գնալ:

2. Պատերազմում են գործարանները, Փաբրիկները, լարուատորիանները և ինստիտուտները

Մարտի տեխնիկական միջոցներով բանակների հակայական չափով հագեցումը սպատերազմի ժամանակ պահանջում է պատերազմող կողմերի տնտեսության շտեսնված լարվածություն։ Պատերազմող պետությունների համար բարձրական չի միայն բազմամիշոն բանակներին հակայական քանակությամբ պարեն հայթայթել (վորի համար զորահավաքի յենթարկված կլինի ամբողջ գյուղատնտեսությունը)։ Նրանք կարիք կզգան պատերազմի համար զորահավաքի յենթարկել ամբողջ արդյունաբերությունը։ ԶԵ՞վոր տանկերը, զրահապատճերը, սավառնակները, թնդանոթները, ավտոմոբիլները, հրացանները, արկերը և այլն պատրաստում են մետաղից—պողպատից, յերկաթից, արձճից, ալյումինից, ցինկից և այլն։ Պատերազմի այս բոլոր անթերիկական միջոցների պատրաստության համար պահանջվում են ամենաբարդ մեքենաներով սարքավորված գործարաններ։ Իսկ այդ բոլոր մարտական մեքենաները գործի գցելու համար հարկավոր են բենզին, նավթ, ածուխ։

Խոշոր աշխատանք ունեն կատարելու դիտական լարուատորիաները, ինստիտուտները և այլն։ Նրանք անդադար կաշխատեն հնարել կովի տեխնիկական նոր միջոցներ, նրանք կաշխատեն նոր միջոցներ հնարել անվնաս գարձնելու հակառակորդի գործադրած միջոցները։

«Մետաղագործությունը, ֆիմիան, ելեկտրականությունը, ուղիղ և այլն, լարուատորիանները, գիտական ինստիտուտները, այս բոլոր մորիկացիայի կենքարկվեն պատերազմի համար, այս

բոլորը ի սպաս կդրվի պատերազմին։ Յեկ մենք ձեզ հետ միասին, —ասում եր ընկ։ Վորոշելով կոմյերիստիության համամիութենական IX համագումարում իր յելույթի ժամանակ, —դատելով պատերազմի մասին, անհրաժեշտ ե նույնակա հիշել, վոր մենք կպաշտպանվենք վոչ միայն զինվածքանակով, մենք միաժամանակ կպատերազմենք քե՛ մեր արդյունաբերությամբ, քե՛ մեր մեհենաներով, քե՛ մեր լարուատորիաններով, քե՛ ինստիտուտներով»։

3. Հնգամյակի հաջողությունները ԽՍՀՄ պաշտպանության հաջողություններն են

Սոցիալիստական ինդուստրացման վիթխարի հաջողությունները, մի շարք հակա ձեռնարկությունների կառուցումն ու գործարկումը հաստատուն հիմք են ծառայում կարմիր բանակի տեխնիկական հագեցման համար։ Մի՞թե Մաղնիտոգորսկու գոմնաները չե՞ն հանդիսանում հզոր բարյա պաշտպանության համար։ ԶԵ՞վոր նրանք տալիս են մետաղ, առանց վորի չես ունենա վոչ մի մարտական մեքենա։ Մի՞թե Բադգի, Գրոզնու Բաշկիրի նավթը չի ամրացնում ԽՍՀՄ պաշտպանությունը։ Զե վոր այդ նավթն ե, վոր գործի յե դպում մեր գործարանների մեքենաները, չե՞ վոր առանց նրանից ստացված բենզինի չի կարող աշխատել վոչ մի մեքենա, չի թռչի վոչ մի սավառնակ։

Համաշխարհային պատերազմի վործը ցույց է տալիս, վոր այսոր արհեստական մետաքս պատրաստող գործարանը վաղը կարող ե արտադրել պայմուցիկ

նյութեր : Վոր այսոր իր հետեւից կոնքայն քաշող տրակտորը վաղը կարող ե իր յետեւից քաջել թնդանոթ : Իսկ տրակտորիստը, վորն այսոր հերկում ե հարցուր հազարավոր հեկտար հողեր կոլտնտեսությունների ցանքի համար, յերբ հարկավոր լինի, նա հիանալի կարող ե տանկավարի և մեջենալարի պարտականություններ կատարել :

Յեկ մի՞թե կոլտնտեսություններն ու խորհրդընտեսությունները չե՞ն ստեղծում անհրաժեշտ պարենավորման բազա Կարմիր բանակի համար՝ կապիտալի գեմ մղվելիք մարտերի համար :

Իրականացնելով Հնդամյակը չորս տարում, բանվորը, կոլտնտեսականը ամրացնում են այդպիսով ԽՍՀՄ պաշտպանությունը :

Պայքարելով յերկրորդ Հնդամյակի մեծագույն պլանների կատարման համար, մենք այդպիսով իսկ ԽՍՀՄ դարձնում ենք սոցիալիզմի անտոիլ ամրոց :

Տեխնիկական-տեսական տեսակետից հասնելով ու անցնելով կապիտալիզմի առաջամուր յերկրներին, մենք այդպիսով իսկ ապահովում ենք ԽՍՀՄ պաշտպանությունը իմպերիալիստների ամեն տեսակ հարձակումներից :

Սոցիալիստական շինարարության տեմպերի ամեն դանդաղում (վորի մասին այնպես յերազում են կուլտային աղենուներ՝ աջ ուղղութեանները), կնշանակեր միաժամանակ մեր յերկրի պաշտպանունակության, կարմիր բանակի մարտական հղորության թուլացում :

«Դանդաղեցնել տեմպերը, —ասում եր ընկ. Ստալինը, —այդ նշանակում ե յետ մնալ : Խոկ յետ մնացողներին խփում են : Սակայն մենք չենք ու-

գում, վոր մեզ խփեն : Վո՞չ, չե՞նք ուզում : Հին Ռուսաստանի պատմություններ նրանումն եր, վոր նրան ամեղադար խփում եյին յետամենայության համար... Ռազմական յետամենացության համար, կուլտուրական հետամենացության համար, պետական հետամենացության համար, արդյունաբերական յետամենացության համար, զյուլատնտեսության յետամենացության համար : Խըփում եյին նրա համար, վոր այդ յեկամտաքեր եր և անցնում եր անպատճեց... Այդպես ե արդեն կապիտալիզմի որենիքը — խփել յետամենացներին և քույլերին... Ուզո՞ւմ եք, վոր խփեն մեր սոցիալիստական հայրենիքին և վոր նա կորցնի իր անկախությունը : Խոկ յերե այդ չեք ուզում, ուուք պիտի և ամենակարն ժամանակում վերացնեք նրա յետամենացություններ և ծավալեք իսկական բայլշվիլիյան տեմպեր նրա զյուլատնտեսության զարգման գործում» :

Կուսակցության ղեկավարությամբ բանվորներն ու կոլտնտեսականները հաջողությամբ կատարում են այդ խողիբը : Յեկ այդ հիման վրա ծավալվում ե Կարմիր բանակի տեխնիկական հաղեցումը : Տեխնիկան քանի դնում, ավելի և հագեցնում կարմիր բանակին :

4. Զորքերի ինչ տեսակներ կան կարմիր բանակում ՀԵՏՎԱԿԲ

Հետեւակը զորքերի հիմնական տեսակն եւ : Ինչո՞ւ հետեւակը զորքերի հիմնական տեսակն եւ : Նրա համար, վոր նա իր վրա յե կրում մարտի գլխավոր ծանրությունը : Զորքերի ուրիշ վոչ մի տեսակ, բացի հետեւակից, չի կարող վճռական բոնամարտով վերջնակա-

նապես վոչնչացնել հակառակորդի կենդանի ուժը և ամրացնել իր գրաված ռայոնը, պահպանելով այն հակառակորդի նոր գրոհներից: Զորքերի ուրիշ վոչ մի տեսակ, բացի հետեակից, չի կարող այնպես, ինչպես հետեակը, հարմարվել տեղանքին, ոգտագործելով յուրաքանչյուր բլրակ, յուրաքանչյուր սարալանջ, յուրաքանչյուր թուրի: Զորքերի ուրիշ վոչ մի տեսակ, բացի հետեակից, հարմարեցված չի տեղանքի ամենաբարձապիսի պայմաններում գործողություններին, ամեն տեսակ յեղանակին ու ժամանակին: Այնտեղով, վորտեղով չի անցնի հրետանին, չի անցնի տանկը, վորտեղով առաջ չի շարժվի նույնիսկ ձիավորը, հետեակը կանցնի: Տանկը կույր ե զիշերը: Զրահապատը կարող ե առաջ շարժվել, միայն հայտաբերելով իրեն կրակով և մեքենայի աղմուկով: Հետեակը կարող ե առաջ շարժվել որ ու գիշերվա ամեն ժամանակ, համարյա առանց աղմուկի: Ջունը անհաղթահարելի արդելք և դորքերի մի շարք տեսակների համար, բայց վոչ հետեակի համար:

Հատկապես այդ հատկությունների չնորհիվ ե, վոր հետեակը հանդիսանում ե զորքերի հիմնական և ամենից ավելի բաղմաքանակ տեսակը:

Հետեակը սպառաղինված ե տեխնիկայով, վորը հնարավություն ե տալիս ունենալու հզոր կրակ: Այդ հրացանն ե—ավտոմատ հրացանը, հաստօղավոր և թեթև գնդացրերը, ձեռքի և հրացանային նոնակները: Բացի դրանցից, նա սպառաղինված ե թեթև դաշտային հրանոթներով (վոր մարտում հեշտությամբ կարելի յետղափոխել նաև առանց մարդկանց ոգնության) և առանցնետերով:

Հետեակի նման սպառաղինումը հնարավորություն

և տալիս նրան իր մարտական աշխատանքում զուղարք է կենդանի ուժի շարությունիուն ու հարվածը հզոր կրակի հետ:

Զորքերի մյուս բոլոր տեսակների հիմնական խընդիրն ե՝ աջակցել հետեակի մարտական աշխատանքին: Այդ նպատակին ծառայում ե՝

### ՀԵԾԵԼԱԶՈՐԻՑ

Նրա հիմնական հատկությունն ե շարժունակությունը, վորը հնարավորություն ե տալիս նրան հիմնալի կերպով հետախուզություն կատարել հակառակորդի դաշտում կայսավորության խորքում և նրա թեերում: Հեծելազորի հայտնվելու հանկարծակիությունը հնարավորություն ե տալիս նրան, շրջանցով, հակառակորդի թեկին կամ թիկունքին անսովուսելի հարվածով մարտի ժամանակ հաճախ վճռական հարվածներ հասցնել: Հեծելազորը անփոխարինելի յե հակառակորդին հետապելու մեջ: Ավորաբարը հեծելազորը գործում ե հետեակային մասերի կաղմում (հետախույզների դասակներ, վորոնք տրվում են հետեակին աջակցելու համար, հեծելավագտեր և այլն): Սակայն նա կարող ե կատարել նաև ինքնուրույն խնդիրներ: Դրա համար նա սովորաբար միանում և կաղմում ե խոշոր հեծյալ մասեր—դիվիզիաներ, կորպուսներ, նույնիսկ բանակներ: Գործողությունների այդպիսի փայլուն որինակներից կարող ե լինել 1-ին հեծյալ բանակի ույզերը և արշակները:

Սպառաղինումը նույն ե, ինչ վոր հետեակինը (գնդացրերը նա կրում ե սայլերի վրա): Բացի դրանցից հեծելազիներն ունեն նաև թթեր: Հեծելազորի մեծ մասների ինքնուրույն գործողությունների ժամանակ,

Նրան ոգնելու համար տրվում են տանկեր, զբահապատճեր, մեքենայական մասեր, ալիացիա և այլն:  
Հետեւակի հղոր ողնականն ե հաղիսանում՝

### ՀՐԵՏԱՆԻՆ

Նա իր կրակով վոչնչացնում ե հակառակորդի կենդանի ուժը, վոչնչացնում ե նրա կրակային կեռերը (զնդացրեր, Հրետանի): Հրետանին քարուքանդ ե անում այն բոլոր արդելքները, վորոնք արդելք են հանդիսանում հետեւակի առաջարժմանը (Լարացանցեր, Հողաթմբեր և այլն): Հրետանին իր կրակով խանդարում ե հակառակորդին կուտակվել գրոհի համար և յիտ ե մղում գրոհողներին կամ փակում ե նրանց ճանապարհը շարժման համար: Նա կոիվ ե մղում տանկերի գեմ, կրահապատների, զրահապատ դնացըների գեմ, իսկ հատուկ զենիթային հրետանին—հակառակորդի սալառնակների գեմ: Նա ուղեկցում ե հետեւակին հարձակման ժամանակ, ամբողջ ժամանակ աշակեցելով նրա կրակին:

Հեռահար հղոր հրետանին զնդակոծում ե հակառակորդի թիկունքները, խանդարում ե նրան սայլով կրելու ու բերելու մոտեցնելու համալրումը, ամերում ե նրա պահետաները և տրանսպորտը:

### ԶՐԱՀԱՄԱՍԱՆՐԸ

Զրահամասին են վերաբերում տանկերը, զրահալոտները և զրահազնացըները:

Այս բոլոր զրահավոր մեքենաների հիմնական խրնդիրն ե աշակեցել հետեւակին՝ ոժեղացնելով նրա կրակային հղորությունը:

Տանկերը, չնորհիվ իրենց թրթուռաձև ընթացքի՝ կարող են առող շարժվել առանց ճանապարհների:

Ա հաղթահարել դանազան արդելքներ, ինչպես որինակ՝ հողաթմբեր, փոսեր, խրամներ, վոչ շատ խոր գետեր: Նրանք սպառազինված են թնդանոթներով և գնդացրերով: Տանկերը լինում են թեթև, միջին և ծանր: Թեթև տանկերը և փոքրիկ տանկետկաներն ոգտագործվում են սովորաբար հետախուզության համար: Միջններն ու ծանրները—հետեւակին աջակցելու համար հարձակման ժամանակի, իսկ յերբեմն ել հակառակորդի դասավորության խորքում լինենություն ուղղվեր կատարելու համար (այնանդ նրանք վոչնչացնում են նրա կրակային կետերը և ցրիվ են տալիս կենդանի ուժը): Տանկերի արագությունը տարբեր և լինում, նայած նրանց հատկություններին և ճանապարհներին—20-ից մինչև 80 կիլոմետր: Տանկերը պատված են զրահով, վորը պաշտպանում ե նրանց հրացանային և գնդացրային կրակեց: Կան տանկերի այնպիսի տեսակներ (տիպեր), վարոնք չեն վախենում նաև զրահամար զնդակներից: Աջակցելով հետեւակին, նրա համար ճանապարհ են բաց անում լարացանցերի միջով, վոչնչացնում են հակառակորդի կրակային կետերը, ցրիվ են տալիս նրա կենդանի ուժը: Հետեւակը, սովորաբար, ընթանում է տանկերի հետեւակից:

Այդ պատճառով հետիւտների խնդիրն ե, վորոնց գեմ են շարժվում տանկերը, թաղնվելով տանկեց, թողնել վոր մոտենա և ապա կենարոնացնել կրակը նրա հետեւակից ընթացող հետեւակի վրա:

Տանկի գլխավոր թշնամին հրետանին ե: Հետեւակը կոիվ ե մղում տանկերի գեմ, նրա տակ նետելով նոնակներ կամ նոնակների կատողներ: Արդյունքներ ե տալիս նաև զրահամար զնդակներով հրաձգությունը դիտաձեղերի վրա և տանկի մարտական ճեղքերի վրա:

Տանկի ճանապարհը խափանելու համար, կարելի յե  
խրամներ փորել այնպիսի խորության և լայնության ։  
վորակեսղի տանկը չկարողանա անցնել, կամ փորել,  
պատրաստել քողարկված դայլագրեր, վորոնց մեջ նա  
կընկնի և կիորտակղի : Կառուցում են ականային դաշ-  
տեր և Փուղասներ՝ տանկերը պայթեցնելու համար :

Զրահապատճերը տանկերի համեմատությամբ ու-  
նեն այն թերությունը, զոր կարիք ունեն լավ, իրենց  
հարմար ճանապարհների . չեն կարող հաղթահարել ար-  
դելքները : Միայն միքանի նորագույն տիպի զրահավ-  
տումորիներ (վեցանվանի, կամ վորոնք բացի անինե-  
րից, ունեն նաև թրթուուածե ընթացք) կարող են շարժ-  
վել առանց ճանապարհների և ձյունով :

Լավ ճանապարհների վրա զրահավտումորիները  
հայտաբերում են իրենց հիմնական հատկությունը . . .  
այն ե՝ իրենց շարունակությունը, կարող և արագորեն  
և անսպասելի հայտնվել մարտում և ոգնել հետեւակին  
ու հեծելազորին իրենց հզոր կրակով : Զրահապատճերն-  
ողտագործվում են հետեւակի կամ հարձակման ոգնե-  
լու կամ նրա յետիսաղացումը պաշտպանելու համար,  
հակառակորդին հետապնդելու, թերուում հանկարծակի  
հարվածներ հասցնելու համար և այլն : Ինչպես տանկի  
համար, զրահապատի համար նույնպիս գլխավոր թշնա-  
մին հրետանին ե : Զրահապատճերի դեմ կովելու հա-  
մար կան հատուկ թեթև և շարժուն թնդանոթներ, վո-  
րոնք լինում են վոչ միայն հատուկ հրետանական զո-  
րամասերում, այլև հետեւակի հրետանական ստորաբա-  
ժանումներում : Հետիուր կոիկ և մղում զրահապատի  
դեմ զրահահար գնդակներով, նոնակով, խափանում-  
ներ և կառուցում, քանդում և մեծ խրամներ, դնում և  
գուղասներ զրահապատճերի հնարավոր շարժման ճա-  
նապարհների վրա :

Զրահապատճերը սպառազինված են գնդացրելով  
և հրանոթներով : Նրանք ողնում են զորքերին նրանց  
մարտական գործողություններում (պաշտուանության,  
հարձակման և այլն) իրենց հզոր կրակով : Բացի դրա-  
նից, նրանք ողտաղործում են յերկաթուղիները, կա-  
րենոր հանգույցները պահպանելու և համար, հակառա-  
կորդի թիկունցների վրա հարձակումներ գործելու,  
յերկաթուղագծեր սարքելու կամ փչացնելու աշխատան-  
քը՝ իր կրակով պաշտպանելու համար :

Զրահապատճերի դեմ կոիկ և մղում հրետանին,  
գնդակոծելով նրանց հրանոթներով և քանդելով յեր-  
դակուղագծերը . հետեւակը կոիկ և մղում ուղարկու-  
թուղաներ դնելով և քարուքանդ անելով յերկաթուղա-  
գծերը, կոիկ են մղում ինքնաթիռները—ձեւելով նրանց  
վրա ոռութեր :

Հետեւական դեր և կատարում ժամանակից պա-  
տերազմում

### Ավիվագին

Ավիվագիայի հիմնական խնդիրն և աջակցել վեր-  
երկրյա զորքերին :

Սակառնակ-հետախույզը հակառակորդի զորքերի և  
դասավորության հետախուզությունն և կատարում,  
պահպանում և զորքերին յերթի ժամանակ և հանդուժին  
հակառակորդի հանկարծակի յերեալուց, զորքերի ի-  
րար միջև կատի վերաբերյալ առաջադրություններ և  
կատարում, կարող ե ոդից գրուել վերերկրյա զորքերի  
վրա : Նա ողնում ե (ձատում ե) հրետանու հրածդու-  
քրա : Հետախույզդ-պահպանակը կարող է թուչել մին-  
թյանը : Հետախույզդ-պահպանակը կարող է թուչել մին-  
թյանը : Հետախույզդ-պահպանակը կարող է թուչել մին-  
թյանը : Հետախույզդ-պահպանակը կարող է թուչել մին-

Նելու մինչև 16 ժամ։ Սպառապինված և գնդացրերով  
և ռումբերով։

Սավառնակ-կործանիչի գլխալոր ինդիքն և վոչըն-  
չացնել հակառակորդի ավիացիան։ Ողային մարտի պա-  
հանջներին համասկատասխան նա թեթև է, շարժուն  
(արագությունը մինչև 300 կիլոմետր մի ժամում),  
սպառապինված և գնդացրերով։

Սավառնակ - ոմբանետը սավառնակներից ամենից  
մեծն է։ Նրա ինդիքն և ոմբակոծել ամբաշխություն-  
ները, կրակային կետելը, հակառակորդի թիկունըն ու  
կենդանի ուժը։ Բմբանետերը լինում էն թեթև և ծանր,  
ուսւմը են վերցնում 400 կիլոգրամից մինչև 2000 և ա-  
վելի կիլոգրամ։ բացի ռումբերից, սպառապինված և  
գնդացրերով։

Բացի վերոհիշյալ հետեակին ցույց տված ողնու-  
թյունից, մի շարք սավառնակներ հետեակի մարտում  
անմիջական մասնակցություն են ունենում, դրոհելով  
հակառակորդի զորքերի վրա ողից։ Անապատելի կեր-  
պով հայտնվելով (անտառի, լեռների յետեկից) և թրո-  
չելով վոչ մեծ բարձրության վրա զորքերի գլխավերե-  
վում, զբոհիչները գնդակոծում են զորքերին գնդացրե-  
րով, ճգում են նրանց վրա ռումբեր։ Այդպիսի հարձա-  
կումներ ավիացիան կատարում են նաև՝ ինքնուրույն,  
հետեակի գործողություններից առանձին։ Հղոր սա-  
վառնակները ոգտագործվում են նաև զորքերի տեղա-  
փոխության համար։ Այդ նպատակին ծառայում են  
նույնպես դիրիժարները։

Դիրիժարները կարող են բարձրացնել մեծ ծանրու-  
թյան բեռ և մնալ ողում միքանի որ։ Նրանք սպառա-  
պինված են գնդացրերով, ռումբերով և թեթև թնդա-

նոթներով։ Կարող են ոգտագործվել հեռավոր հետա-  
խուզության համար, ռումբեր ճգելու համար։

Սավառնակների գեմ կոիվ և մղում հետևակը հրա-  
ցանների և թեթև գնդացրերի ողնությամբ (ամբողջ  
սոորշաբաժանումներով և վոչ ավելի, քան 500 մետր  
բարձրության գեպօռում), հաստցավոր գնդացրերի և  
գնիթային գնդացրերի ողնությամբ (4—6 գնդացրերի  
խմբակով վոչ ավելի հազար մետր բարձրության դեպ-  
քում)։ Ավելի մեծ բարձրությունների վրա սավառնակ-  
ների դեմ կոիվ և մղում զենիթային հրետանին։

### ՔԻՄԻԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ

Կարմիր բանակը կուլի քիմիական միջոցներ էզոր-  
ծաղրի միայն այն դեպքում, յեթև այդ միջոցները կա-  
պիալիստների բանակները առաջնորդ կոկոն գործա-  
զրել, վորոնք հսկայական աշխատանք են առնում քի-  
միական պատերազմի պատրաստության համար։

Մարտական թունավոր նյութերի ինոդիքն և վոչըն-  
չացնել կամ ժամանակավորապես չարքեց հանել հեն-  
դանի ուժը, նույնպես և դժվարացնել զորքեց մար-  
տական դործողությունները։

Քիմիական պաշտպանության խնդիքն և պաշտպա-  
նել զորքերին, դենքը, պարենը թն ներգործությու-  
նից, խանդարել հակառակորդին քիմիական հարձակում  
կատարելու, արագորեն վերացնել նրա հետեանքները,  
վոչնչացնել քիմիական արդելքները և այլն։ Դրա հա-  
մար մշտապես տարվում է քիմհետախուզություն, կա-  
ռուցվում են թն պաշտպանվելու ապաստարաններ,  
կիրառում են հակագաղեր և պաշտպանական հաղուստ,  
ողնություն և ցույց տալիս թն վնասվածներին։

Ճարտարագիտական զորքերի խնդիրն ե աջակցել հետևակին, նույնպես և հեծելաղորին ու հրետանուն՝ նրանց մարտական աշխատանքում :

Այս զորքերը շինում են ամուռ ծածկաբաններ և կառուցումներ, քողարկում են զորամասերին, կամուրջներ են գցում ու փչացնում, կառուցում ու ավերում են ճանապարհներ, ջրանցներ (հարձակման ժամանակ), ականադաշտեր, ֆուղաներ, հակատանկային արգելքներ և այլն : Նրանք անց են կացնում լուսավորություն, լարացների ելեկտրականացում, լուսարձակային գործը և այլն :

ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐ

Կապի զորքերն ունեն հսկայական նշանակություն : Առանց զորքերի կանոնավորված կապի՝ վերից վար, վարից վեր և իրար միջև ժամանակակից մարտում հաղթանակն անհնարին : Առանց կապի հրամատարը չի կարող դեկալարել մարտը, չի կարող լինել զորքերի բոլոր տեսակների համարործակցություն :

Մարտում կապի համար ոգտագործվում են լրատարները, դրոշակներով նշանաբարները և տեխնիկական միջոցները. այն ե՝ հեռախոսը, հեռագիրը, ռադիոն, լուսատու և ձայնական աղղանշանները, քաթենը—նշանները (սավառնակի հետ կապի համար) : Ողտագործվում են նաև աղավնային փոստը, չները : Այսպիսով կապի միջոցներն ու տեխնիկան բաղմաղիսի յեն և պահանջում են մարտիկների բարձր հմտություն :

Բացի վերոհիշյալներից, կան դարձյալ զորքերի միշտ բանական տեսակներ—յերկաթուղային և ավտո-

մոբիլային (զորքերին ու բեռներ փոխադրելու կաղմակերպման համար), սանիտարական (հիվանդներին ու վիրավորվածներին սպասարկելու և բացահանելու—Էլոկուտացիայի համար), գումակներ և այլն : Թիկունքի զորքերի կաղմակերպումը շատրների պարտականությունն է, վորոնք նախատեսում են բոլոր անհրաժեշտ աշխատանքները սննդի, զորքերին ամեն անհրաժեշտ պիտույքներով ապահովելու համար, թիկունքում կարգը և կարեռագույն ամրությունները պահպանելու համար :

### ԾՈՎԱՅԻՆ ՏՈՐՄԻԴ

Մեր կարմիր տորմիղի հիմնական խնդիրն ե պահպանել ԽՍՀՄ սահմանները ծովից : Մովային նավելու կարող են մարտ մղել հակառակորդի նավերի դեմ, արդելել զորքերի ծովափ հանելը, գործելով առափնյա պաշտպանության հետ մեկտեղ : Տորմիղը կարող է դորձել նույնպես վերերկրյա զորքերի հետ, վորոնք ուղերացիաներ են կատարում ծովափներում և գետերի ավերում : Գետային տորմիղը (Փլոտիլիան) խոշոր դեր կատարեց քաղաքացիական պատերազմում (Վոլգակասովյան տորմիղը կուչակի և չեխերի դեմ, Դնեստրինը—սպիտակ լեհերի դեմ կովում և այլն) և ցույց տվին իրենց բարձր մարտական հատկությունները չեն. Արեգելյան հատուկ կարմրադրու Բանակի մարտերում (Ումուրյան դետային տորմիղ) : Տորմիղը մատակարարված ե զորքագույն հրանոթներով, ականներով, զենիթային հրետանիով : Տորմիղը գործում է ծովային ավելացիայի հետ միասին—հիղըռոպլանների հետ, վորոնք ընդունակ են իջնել ջրի վրա և թռչել :

կարմիր բանակի տեխնիկան բարդ և և  
բազմատեսակ : Նա տարեցտարի լավանում ու  
մեծանում է : Մեր մարտական տեխնիկան յետ  
չի մնում արտասահմանյան տեխնիկայից : Այսպես  
որինակ՝ Դեկտյարեի սխտեմի մեր թեթև գնդացիրը  
իրավացիորեն այդ տիպի մեքենաներից լավագույննե-  
րից մեկն և համարվում : Մի շաբթ թուիչքներում, մի-  
ջազդային մըցությունների ժամանակ խորհրդային սա-  
վառնակները ցուցահանեցին Փրանսիական սավառնակ-  
ներից բարձր վորակ : Մեր հրետանին, տանկերը յետ  
չին մնում կապիտալիստական բանակների հրետանուց  
և տանկերից : Մեր հակագաղն աշխարհում լավագույն-  
ներից մեկը և հանդիսանում : Ցուրաքանչյուր հրամա-  
տարի, յուրաքանչյուր մարտիկի խնդիրն ե տիրապետել  
այդ բարդ տեխնիկային : Այդ կարմիր բանակի մար-  
տական պատրաստության գլխավոր խնդիրն է :

«Բանակից, —ասում ե ընկ . Գամարինիկը . —ա-  
վելի քան յերեկ, պետք ե պահանջել տիրապետել  
տեխնիկային, սովորել դեկավարել այդ տեխնիկան,  
ավելի բարձրացնել իրամատարի, քաղաշխատողի,  
մարտիկի տեխնիկական կուլտուրան : Մենք ունենք  
բանակում ամենահամարի մարդկային մատերիալ,  
վարը նվիրված ե մինչև վերջը պրոետարկան հե-  
ղափոխությանը, և նրա ձեռքը պետք ե տալ ե՛լ ա-  
վելի տեխնիկա, կուլի տեխնիկակական միջացնիք,  
նուեցնել նրան ավտոմոբիլի և սավանակի վրա և  
սովորեցնել, սովորեցնել կատրելապես տիրապե-  
տելու տեխնիկային : Տեխնիկայի մեջ ե այժմ խրա-  
նը : Տեխնիկան այժմ գլխավորն ե » :

5. Ի՞նչ ե նշանակում տիրապետել տեխնիկային  
«ԲԱՅԼԵՎԻԿՆԵՐԻ ՊԵՏՔ Ե ՏԻՐԱՊԵՏԵՆ  
ՏԵԽՆԻԿԱՅԻՆ»

Մեր կուսակցության և բանվոր դասակարգի առաջ-  
նորդ ընկ . Ստալինի առաջաղթաց լողունդի չուրջը  
պետք և մորիլիցացիայի յնթարկել բանվոր դասակար-  
գի, առաջալոր-կոլտնտեսականներից լավագույնների  
ջանքերը :

Ստալինիրագի տրակտորի գործարանի հարլածա-  
մինները, Մազնիտուլորսկի հարվածայինները, Սնլյա-  
շի առաջալորները, տիրապետելով բարդ նորագույն  
տեխնիկային, ամբողջ աշխարհին ցույց են տալին, թե  
ինչի յե ընդունակ բանվոր դասակարգը, վորն աղասա-  
գրլած և կապիտալիստների իշխանությունից :

Կոմիելով յերկաթե հեղափոխական կարգապահու-  
թյուն, ծավալելով սոցմբցակիցությունը տեխնիկային  
տիրապետելու և խնայելու շուրջը, ընդլայնելով ու-  
ցիոնալացման և գյուտարարության ճակատը, կարմիր  
բանակը նույնութեա կատարում և բանվոր դասակարգի  
առաջնորդի լողունդը, պայքարում և մարտական տեխ-  
նիկային լիովին տիրապետելու համար :

Իսկ ի՞նչ ե նշանակում տիրապետել տեխնիկա-  
յին, վերլուծենք այդ որինակներով :

Հեռ . Սրե . Հատուկ կարմիր բանակի մարտերի  
մասնակիցը պատմում է :

«Մարտը յեռում է : Յերրորդ անդամ սպիտակի բան-  
դիտները մինչեւ մեկ գումարտակ ուժով գրուում են  
մեր վաշտի տեղամասի վրա : Առանձնապես ուժեղ հոր-  
դածն ուղղված ե աջ թեփ վրա, — խոր ճորակը հնարսու-

վորություն և տալիս սպիտակներին ծածկված մոտենալ հստարյա կիս մեր դասավորությանը : Սակայն ամեն անդամ գնդացրողք Ստրոյեվի կործանիչ կրակը բանդիտներին յետ և շպրտում : Յեվ ահա սկսվեց յերրորդ դրոհը : Նորից աջ թեռում հայոնվեց հակառակորդի մեծ խումբ : Քանի գնում, մոտենում և այդ խումբը : Ստրոյեվի գնդացրին սկսեց աշխատել : Յեվ հանկարծ...լոեց : Խափանվեց : Համոզվելով, վոր գնդացիրը չի աշխատում, բանդիտները նետվեցին առաջ : Դարձյալ 2—3 րոպե և աջ թեռ պետք է ընկներ հակառակորդի գերազանցող ուժերի ձեռքը : Սակայն գնդացիրը լոեց ընդամենը միքանի վայրկյան : Իսկ հետո արձճի անձրև թափեց հարձակվողների վրա : Նրանք պառկեցին : Իսկ մի րոպե սոզացին խուճապի մատնված : Յերրորդ դրոհը յետ և մղված : Ստրոյեվը ժամանակին հասավ ողնության» :

Մի ուրիշ մարտական դեպք խորհրդային-լեհական պատերազմից :

«Հետախույզների դասակը անտառի ճանապարհով ախտոմեքենայով զնում և : Զհասած անտառի բոլորքին, դասակն իշնում և մեքենայից : Մեքենան հեռանում և ճանապարհոց : Հետախույզները վոտքերի թաթերի վրա շարժվում են գեղի բոլորքը : Հաղիվհազ սոզալով հասան բոլորքին, տեսնում են՝ յերկար ժապավինով վոլոր-մոլոր շարժվում և ճանապարհով հակառակորդի հեծելազորը : Առնվազն մի գունդ : Առաջար մասը բարբորին մոտ և, ընդմենը մի կիլոմետրի վրա հետախույզներից : «Դեպի մեքենան», հրաման ետալիս փոխդասհրամը : Սակայն հակառակորդը նկատից հետախուզությանը : Հեծելակների մի դասակ վար-

գով դեպի անտառն և արջավում : Հետախույզներն արդեն վաղելով հասան մինչև մեքենան : Սակայն մեքենան կանգնած և անշարժ : Յրիտասարդ շոփերը շփոթված անդում և ստարերին (մեքենան դործի քցելու դործիք), մոտորը չի աշխատում :

Շոփերը փորձում և մոտորը դործի քցել բանալիով, իդուր : Յեվս մի բոսք նա դրադված և մոտորի հետ իսկ հեծելակներն արդեն յերկացին անտառի բոլորքի մոտ, քում ևն դեպի մեքենան : Հետախույզները սետվում են անտառ, սկսում են հրածդությունը : իչարկե, նրանք հեռանալ չեն կարող . արդեն անտառի չորս կողմից շրջապատում են սպիտակները : Հետախույզները կորան, մեքենան ընկալ թշնամու ձեռքը : Հետախուզության ուղարկող զորամասը ժամանակին չիմացավ վտանգի մասին» :

Ինչի՞ մասին են խոսում այս յերկու որինակը, վորոնք վերցված են Կարմիր բանակի մարտական դործողությունների պրակտիկայից :

Առաջինը խոսում և այն մասին, վոր չնորհիվ դընդացքը Ստրոյեվի խելացի, հմուտ աշխատանքին, վորն արագորեն վերացրեց գնդացրի խափանումը, կարմիր բանակային զորամասը հաջողություն ունեցավ :

Յերկրորդը խոսում և այն մասին, վոր շոփերի տղիւտության պատճառով, վոր չկարողացավ իսկույն հայտաբերել մոտորի չաշխատելու պատճառը, կործանվեց հետախույզների դասակը :

Գնդացրորդ Ստրոյեվը տիրապետում եր իր մարտական մեքենային : Նա այդ մեքենան դիտեր դերազանց : Նա իսկույն դտավ և վերացրեց անսարքությունը :

**Շոփերը չեր տիրապետում ավտոմոբիլի մոտորին և  
Նա չկարողացաւ հայտարերել անսարքության պատ-  
ճառները, և արագորեն չվերացրեց այն :**

## **ՀԻԾԿՐ, ԸՆԿԵՐ**

1. Տիրապետել տեխնիկային—այդ նշանակում է կատարելապես, մինչև նրաուրյունը, ինչպես իր հինգ մատը իմանալ, նաևաչել իր մարտական տեխնիկան, նրա տեխնիկական հատկությունները (ինչպես են կառուցված, ինչ փոխգործողուրյուն ունեն նրա մա-  
սերը, փորոնք են նրա հենարավոր քերուրյունները) :

Ինչպես արագորեն վերացնել այդ քերուրյուննե-  
րը: Առանց դրան չկա և չի կարող լինել հաջողուրյուն:

Այժմ խորհենք ահա թե ինչ դեպքի վրա, վորը  
տեղի յե ունեցել Հեռ. Ար. Հասուկ Կարմիր բանակի  
մարտերի շրջանում սպիտակ-չինացիների դեմ: Կար-  
միր քանտակային վաշտերից մեկը սպիտակ-չինացիների  
ամբողջ յերկու գումարտակի հնչման տակ հարկադրու-  
ված յեղավ յետ քաշվել: Նահանջը պաշտպանում եր  
գնդացրերի կրակը: Նահանջը պաշտպանելու հա-  
մար մնացել եր կրասեր հրամատար գնդացրորդ-դեկ-  
տյարեցի Գրիշինն իր համարով: Գնդացիրը զրին իր  
հողաթմբի յետեւում, սպասում են հակառակորդի  
հայտնիլուն անտառի կողմից, վորը տեղափորված եր  
յերկու կիլոմետրի վրա: Հակառակորդը չափաց իրեն  
սոլասել: Սպիտակ-չինացիները վաշտին հետապնդելու  
համար ուղարկեցին հեծելակների մի վաշտ: Հեծելա-  
վաշտն արշավելով դուրս յեղավ անտառից և քշեց ուղ-  
ղակի ճանապարհին մոտիկ քողարկված գնդացրի վրա:  
Հեծելավաշտի ու մեր գնդացրորդների միջև հետափ-  
րությունն արագորեն կրճատվում եր: Կարմիր բանա-

կային իվանովը, ջղայնանալով, հրում ե Գրիշինին, նա  
առանց շտապելու, շարունակում ե նշանառությունը,  
սպասում ե, գանգաղում ե: «Դե՛, կրակի՛ր, կկոտո-  
քեն մեղ»—ջղայնացած ասում ե իվանովը: «Ա-զասի՛ր»,  
—հանգիստ պատասխանում ե Գրիշինը և, հակառա-  
կորդին մոտ թողնելով 500 մետր հեռավորության վրա,  
չաց ե անում հակառակորդի վրա սպանիչ կրակ: Հա-  
կառակորդը հարկադրվում ե ձիուց իջնել և պառկել,  
հեծելավաշտի մի մասը խուճապի մատնված, քըում ե  
զեղովի անտառ: Զոկի հրամատար Գրիշինը չկրակեց նրա  
համար, վոր գերազանց յուրացրել եր իր մեքենայի  
մարտական հատկությունները: Նա դիտեր, վոր իիթե  
գնդացրի կրակը կարող ե գործել 800 մետրի վրա, և  
հանգիստ թողեց, վոր հակառակորդը մոտենա այդ հե-  
ռավորության վրա:

Ինչի՞ մասին ե խոսում այս որինակը, վորը վերց-  
ված ե ԲԳԿԲ մարտական պրակտիկայից: Նրա մասին,  
վոր մարտիկի, հրամատարի համար, վորոնք ուսում-  
նասիրել են իրենց հանձնած մարտական մեքենայի հատ-  
կությունները, վորոնք սովորել են ճշորեն կիրառել  
այդ մեքենան մարտում, նրանց համար ազահովված ե  
հաջողությունը սպազա ճակատամարտերում:

## **ՀԻԾԿՐ, ԸՆԿԵՐ**

2. Տիրապետել տեխնիկային—այդ նշանակում է կատարելապես ուսումնասիրել զենքի մարտական հատ-  
կությունները. այս զենքի, վորը գտնվում ե ու գրա-  
մար սպառագինուրյան մեջ, նշանակում ե սովորել  
գերազանցորդել պայմանագրությունների մեջ մարտում:

Ամենակատարելագործված զենքն ել վոչ խելացի  
սգտագործման գեղքում անողությունը:

Առաջը տանք իմպերիալիստական պատերազմի հաշմանգամին, վորը պատումում ե այն մասին, թե ինչ-որես ինքը թունավորվել և դաղերից :

«...Մեր տեղամասում գերմանացիները քանիցու գործադրեցին խեղիչէ զաղեր: Վերջին անգամ, այդ կլիներ մի շաբաթ սրանից առաջ: Սյու պատճառով, յերբ յես տեսա, վոր դեպի մեր խրամատներն և մոտենում արագորեն գաղացին ամպը, այդ հանդամանքն առաջվանման իմ մեջ հուզմունք չառաջացրեց: Բոլորն արագությամբ հաղան հակազազերը և սկսեցին պատրաստվել յստ մղելու դերմանացիների գրոհը, վորը սովորաբար լինում եր գաղացին ալիքից հետո: Սակայն հակազազը հագնելով, յես իսկունյ ինչվոր անհարժմար բան զգացի, Շնչառությունս գժվարանում եր, քանի զնում, ավելի գժվարանում եր շնչառությունս: Իսկ գաղի ալիքը կամաց-կամաց շրջապատում եր մեղ, և թվում եր, թե ծայր չկա այդ ալիքին: Գիտակցությունս կողցնելով, յես պատսեցի դիմակը և դեն շպրտեցի: Գաղի ալիքը ներտ թափանցեց թռքերիս մեջ և յես վայր ընկա գիտակցությունս կորցրած: Իմ բախտն եր, վոր այդ վայրկյանին քամին քշեց տարավ գաղի վերջին մնացորդը:

Հիվանդանոցում ընկերս պատմեց ինձ, վոր իմ հակազառում կպել ու բորբոսնել և ուստինը բերանի մուտքի մոտ: Այն ժամանակ յես հիշեցի, վոր յես նախկին գաղացին գրոհից հետո չեմ մաքրել հակազազը: Սյու անփոյթ վերաբերմունքն եր, վոր ինձ այսպիս հաշմանդամ դարձքեց...»:

Ամենքի համար պարզ ե, թե ինչ ե սովորեցնում այս պատմությունը: Տեխնիկան (իսկ հակազազը նույնպիսի կովի տեխնիկական միջոց ե, ինչպես ամեն զենք), վորը

ու չես խնամում, կհրաժարվի մարտում քեզ ողնելուց: Մարտիկի մեքենա-ողնեական անսարք տեխնիկան վեր ե ածվում ծիծաղաշարժ մի բանի, կամ նույնպիսկ զառնում ե նրա թշնամին (ինչպես այդ պատահեց հակազազի հետ, մեջ բերված որինակում): Անսարք տանկը, թընդանոթը, գնդացիրը և այլն միայն ծանրաբեռնում են զորամասը, խանդարում ևն նրա գործողությունը: Ահա թե ի՞նչ է ասում տեխնիկայի խնայման մասին ՀԱԽ նախագահի տեղակալ՝ ընկ. Տուխաչևսկին.

«Ժամանակին մաքրելն ու յուղելը և նիշտ վերաբերմունքը տեխնիկային» նրան ոգտագործելու ժամանակ—մարտում զենքի ու տեխնիկայի անմերժում աշխատանքի ապահովման համար իմնականն ե:

Այն տեխնիկայով, վորը վատ խնամքի պատճառով անպետք ե դարձել, հաղբանակ չի կարելի տանել: Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք ե ըմբռնի, քեզորքան կարենոր ե տեխնիկայի խնամումը: Ի՞նչ կատացվի, յերեւ սալահանեների և տանիերի մոտորները կանգնեն, յերեւ հրետանու հրաճգության գործիքները սխոտ աշխատեն, յերեւ գնդացիքները յերերված ու չարգված են, յերեւ հրացաների հատիկները ծովոծ են. սկիզբ և նշանցային շրջանակը ծոված է, յերեւ նուակների զարկանեները ճանգոտ են, զավանակները կոտրված, հակագազում սրբած չի լինի ուղղինի քրտիկը, ծնկավոր խողովակը կեղտուած և այլն: Պարզ ե, վոր այդպիսի դեպքերում շատ ավելորդ արյուն կրավիլի և դժվար ե հույս դնել մարտի հաջողության վրա:

Հարկալոր և խստորեն կատարել հրամանատարների բոլոր ցուցումները տեխնիկան խնամելու, սիրելաւ. և իր զենքը խնայելու վերաբերյալ, վորպեսզի նա առանց

Վրիակելու խփի նշաններին, կրիտիկական մոմենտին  
չհրաժարվի աշխատելուց»:

Յերեակայիր, ընկեր, ահա թե ինչ.

Կուղնեցկու ածխահանքերի հանքադորձներն ածուխ  
են հանիլ և ուղարկել Մաղնիսողորսկի: Մաղնիսողոր-  
սկու հանքագործները հողից յերկաթահանք են ստացել  
և կուղնեցկու ածխի հետ միասին զոմնայի մեջ են լրց-  
րել: Բարդ մեքենաները գործի յեն գցված, և ահա հալ-  
ված ե մետաղը: Գնացքն այդ մետաղը տարավ զեն-  
քի գործարանը: Այնուղ բարդ մեքենաները տասնյակ  
մարդկանց հսկողության տակ այդ մետաղից պատ-  
րաստեցին գնդացիր: Գնդացիրն ուղարկեցին կարմիր  
բանակային գորսամաս և ընկավ մի անշնորք, անկար-  
գապահ մարտիկի ձեռքը: Նա վատ ե մաքրել այդ  
գնդացիրը, չի յուղել, չի խնայել տեղափոխության,  
յերթի ժամանակ: Յերեք ամսից հետո գնդացիրը շար-  
քից գուրս ե գալիս, մարտական մեքենան դառնում ե  
պողպատի մի կտոր: Իզուր անցավ հանքադորձների և  
պողպատ յեփողների, յերկաթուղայինների և զինվար-  
ովետների աշխատանքը: Բամուն տրվեց գնդացիրը պատ-  
րաստելու վրա ծախսված վողը: Իսկ կարմիր բանակը  
կորցրեց մի մարտական մեքենա, թուլացավ նրա մար-  
տական հղորությունը:

Իսկ ի՞նչ կատացվի, յեթե այդպիսի անշնորք մար-  
տիկների թիվը վոչ՝ թե մեկ, այլ միքանի հարյուրներով  
լինի: Յեթե գնդացիրը բաղդին արժանանան հեռախոսա-  
յին առարատը վատ կապավորի ձեռքում, կամ ավտո-  
մորիւը վատ շոփերի ձեռքում և այլն, ո՞ւմն ե այդ  
ողուտ: Միմիայն դասակարգային թշնամուն:

## ՀԻՇԻՐ, ԸՆԿԵՐ

3. Տիրապետել տեխնիկային—այդ նշանակում ե  
առվորել գերազանցորեն խնայել այն, խնամել այն,  
կանոնավոր և նշորեն վերաբերվել նրա եետ՝ ոգտա-  
գրծելու ժամանակ: Նա, ով չի խնայում տեխնիկան,  
նա վճառում է նորիդային Միության պաշտպանու-  
թյանը, ոգնում է մեր քշնամիներին:

Մենք արդեն գիտենք, ընկեր, վոր Կարմիր բանակն  
ունի դորիքի ամենաբաղմաղիսի տեսակներ, ամենա-  
բաղմաղիսի տեխնիկայով: Զորքերի այդ տեսակներից  
յուրաքանչյուրն իր խնդիրն ունի մարտում (որինակ՝  
Հրետափորը զնդակոծ է կատարում, սապլյուր կամուրջ  
և գցում, տանկավարը լարացանցի մեջ ճանապարհ ե  
բանում հետեւակի համար և այլն—նայած մարտի պայ-  
մաններին): Սակայն զորքերի բոլոր տեսակների ջան-  
քերն ուղղված են մի միանական նպատակի: Այդ նպա-  
տակն է հաղթել թշնամուն: Այստեղից պարզ ե, վոր  
զորքերի բոլոր տեսակների աշխատանքը պետք է կա-  
ռուցվի մի ողբանի համաձայն:

Ի՞նչ կլիներ, յեթե ասենք որինակ, հրետանին  
իր կրակն ամբողջությամբ կենսորոնացներ աջ թիե  
վրա, առանց հրետանու կրակի աջակցության: Կամ թե՝  
հետեւակը հարձակվեր հակառակորդի գնդացրերի վրա  
և ունենար մեծամեծ կորուսներ, իսկ տանկերն այդ  
ժամանակ նոր սկսելին մարտի դուրս դալ: Պարզ ե,  
զոր այդպիսի դործողությունների ժամանակ շատ քիչ  
գույս կարելի յեր դնել հաղթության վրա:

Հատկապես այդ ե պատճառը, վոր ասում են հա-  
մագործակցությունը (համաձայնեցումը զործողու-  
թյունների մեջ) զորքերի բոլոր տեսակների միջև—բա-  
նակի գործողությունների հիմքն ե, հաղթանակի դրա-  
վականն է մարտում:

Աւրեմն բավական չե, որինակի համար, թնդանո՞ւթով հրաձգություն կատարել, այլ հարկավոր և սովորել նաև կրակն ուղղել այնպես, վորպեսզի այդպիսով սղնես զորքերի մյուս տեսակի աշխատանքին։ Բավական չե թուչել սովորել սավառնակի վրա, դիպուկ ուումբեր ձգել հակառակորդի վրա, — այլ հարկավոր և սովորել նաև զործել հրետանու հետ միասին, ոգնել նրան՝ գտնելու նշանը և որեալ և կարողանալ զործել հետեակի հետ միատեղ և այլն։

Զորքերի բոլոր տեսակների համազործակցություն ձեռք բերելու համար զորական միավորության հրամատարությունը յուլորի համար կազմում և մարտի մի ընդհանուր պլան։ Ամբողջ ժամանակ զորամասերը կատեն պահպանում իրար միջն։ Յուրաքանչյուր մարտիկ պետք և հասկանա, թե ինչպես ինքը կարող է իր դենքով ոգնել զորքերի մյուս տեսակին։

«Հետևակը, — ասում ե ընկ. Տուխաչևկին, — իր վրա յե կրում մարտի զլխավոր ծանրությունը, նա հաղահարում ե վիրխարի դժվարություններ հակառակորդին դեմ առ դեմ, կրակային ու բռնմարտային մարտ և վարում և ամրացնաւմ և ձեռք բերված հաղթանակը։ Այդ պատճառով իրետավորները, կապավորները, ժիմիկները, սալյորները և մյուս մասնագետները պարտավոր են ամենն ենք աշակցել հետևակին, քերեացնելներա մարտական աշխատանիքի դժվարությունները, ոգնել նրան, վոր նա հաղթանակի հասնի ամենանվազ կորուստներով։

Այս բոլորը խօսում են այն մասին, վոր յուրաքանչյուր կարմիր բանակային պետք և հասկանա վոչ միայն զորքերի իր տեսակի տակտիկան (մարտական դոր-

ծողությունների յեղանակը), այլև դորքերի այն տեսակներինը, վորոնք աջակցում են նրան, սպասարկում են նրան, վորոնց հետ նա աշխատում է։

Այս պահանջը հավասար չափով վերաբերում է նաև հետիւոտին։ Յեթե հետիւոտը չդիմու, թե մարտում ինչումն և ողտակար տանկը, — ի՞նչպես կարող ե նա գործել նրա հետ մեկտեղ։ Յեթե որինակի համար, հրաձիգը չի հասկանում, վոր յերբ հրետանին, հրետանական նախապատրաստումից հետո, իր կրակը փոխագորում է հակառակորդի դասավորության խորքը, և վոր այդ նշանակում է, վոր ինքը պետք ե սկսի հարձակումը, — ի՞նչ շահ կարող է լինել այդպիսի «համագործակցությունից»։

Թեկուղ ամենակատարելադորձված տեխնիկան հաղթություն չի բերի, յեթե բոլոր մարտիկները չդիմացի այդ տեխնիկայի հետ համագործակցության կանոնները։

Միհնույն ժամանակ յուրաքանչյուր մարտիկ քաջ պետք և իմանա, թե ինչպես պետք է պայքարել հակառակորդի տեխնիկայի դեմ։ Յենթաղբենք, վոր մեր վաշտի վրա յե շարժվում և տանկը։ Ինչ կստացվի, յեթե մարտիկները տանկի դիմական և մարտական անցքերի (Ճեղքերի) վրա հրաձգություն կատարելու վոխարեն, սկսեն հրաձգել նրա վրա (տանկի) դնդակներով անձակելի զրահի վրա և մոռանան նորակների կատոցի մասին, քողարկման մասին։ այն մասին, վոր տանկի յետեական հետևակն ե ընթանում և վոր հենց արդ տանկի հետ յեկող հետևակն ե դլխավոր թշնամին։ Այդքոլորից վոչ մի լավ բան չի կարելի սպասել մեր վաշտի համար։ Այնինչ տանկը կմնա անլնաս։ Հետևակի համար, յուրաքանչյուր մարտիկ պետք ե վոչ միայն կապես, յուրաքանչյուր մարտիկ պետք ե

բողանա գործել իր տեխնիկայի հետ միասին, այն  
ոչ եւ և կարողանա պայքար մզել հակառակորդի տեխ-  
նիկայի դեմ:

## ՀԻԾԻՌ, ԸՆԿԵՐ

4. Տիրապետել տեխնիկային—այդ նշանակում ե  
տուլարել և ամագործակցել այդ տեխնիկայի հետ, իմա-  
նալ թե ինչով նա կարող է ժեզ ոգնել մարտում և ինչով  
դու պետք է ոգնեն նրան, միևնույն ժամանակ իմանալ,  
թե ի՞նչպես պետք է կովել հակառակորդի տեխնիկա-  
յի դեմ և ի՞նչպես վոչիչացնել այն:

5. Տեխնիկան պահանջում է յերկար-է կարգապահու-  
թյուն

Կարմիր բանակի տեխնիկական հագեցումը, տեխ-  
նիկան յուրացնելու խնդիրը պահանջում են ամեն  
կերպ ամբացնել յերկաթե հեղափոխական կարգապա-  
հանթյունը, մեծադույն վորոշակիություն յուրաքան-  
չյուր մարտիկի աշխատանքում, հրամատարի հրամանի  
լիակատար կատարում: Մարտական մեքենան չի հան-  
գուրծում անփույթ վերաբերմունք:

Շոփերը նախքան դուրս դալը չի ստուգել մեքե-  
նայի յուղի առկայությունը: Այդ պատճառով ճանա-  
պարհի կիսին մեքենան դուրս ե զալիս շարքից: Հրե-  
տավորը վատ և խնամում հրանոթը և այդ պատճառով  
նա հրաժարվում է մարտում գործելուց:

Մոտորիստը նախքան թուչելը չի զնել սավորնակի  
մոտորը: Ինչվոր փոքրիկ անսարքություն, վոր պա-  
հանջում եր ընդամենը հինգ բոպե՝ ուղղելու համար,  
մնացել ե աննկատելի: Խոկ մի կես ժամից հետո այդ

պատճառ ե գառնում սավառնորդի (ողաչուի) կյանքի  
և սավառնակի խորտակման:

Այդանու ել ամեն մեքենա պահանջում է կարգա-  
պահություն, ուշադիր վերաբերմունք և ժամանա-  
կին խնամք:

Տեխնիկայի մարտական ողագործման ժամանակ  
անիութության անկարգության արտահայտություննե-  
րը կարող են մեծամեծ վնասներ հասցնել զորքերին պա-  
տերազմի ժամանակ: Ի՞նչ կիսի, յեթե ըրետափոնների  
վատ կարգապահության պատճառով նրանք ուշանան  
կրակ բանալ հակառակորդի հարձակվող տանկերի վրա,  
կամ յեթե մարտի ժամանակ տանկարի անկարգա-  
պահության հետևանքով, վոր մոռացել և ստուգել տան-  
կը, թե նրա մեջ բնողին կա՞ թե վոչ:

Կարմիր բանակի տեխնիկական հագեցումը պար-  
տավորեցնում է մարտիկին՝ ունենալ յերկաթե հեղափո-  
խական կարգապահություն, վոչ միայն մարտում, այլև  
խաղաղ ուսուցման ժամանակ: Այստեղ նույնպես առանց  
կարգապահության, առանց վորոշակիութեն պահպաններու-  
տեխնիկայի ողագործման կանոնները, անխուսափելի  
յեն խորտակումները, կուրվածքները, թանդարժեք մե-  
քենայի կորուստը և ԲԳԿի մարտական հղորության թու-  
րությունը:

Պետք է հիշել նաև այն մասին, թե ինչ կարող է  
պատահել, յեթե անխնամ վերաբերմունք ցույց տանք  
պայմանացիկ նյութերի պահպանմանը, վառողի պահ-  
պանմանը կամ դիմամիտի պահպանմանը: Վո՞րքան  
դժբախտ դեպքեր կարող են պատահել անդույշ վերա-  
բերմունքից դեպի դենքը, դեպի մարտական մեքենան:

6. Կատարել և գերակատարել ուսուցման պլանը

Այսպես ուրեմն, ուսուցման տարիներում մարտիկը պետք է լավ ուսումնասիրի իր մարտական զննքը, տիրապետի նրա մարտական հատկություններին, սովորի կիրառել այն դորքիրի մյուս տեսակների հետ համազործակցության ժամանակ ժամանակակից մարտի բարդ պայմաններում։ Հենց այդ խնդիրն ե, զոր մարտիկը կատարում ե իր տակտիկական ու հրաձգային, շարային ու Փիղիկական պատրաստության ընթացքում։

Ֆիղիկական պատրաստության խնդիրն ե կոփել, մարդկել մարմինը, գարձնել այն դիմացկում։ Առանց ամուր ձեռքի չես սովորի կրակել, նետել նոնակ, խոցել սկինով։ Առանց ամուր փոտքերի չես կարող հաղթահարել յերկար որադնացքներ, չես հասնի տան'ի յետելից հարձակման ժամանակ։ Առանց կանոնավոր, ճիշտ չնշառության չես կարող արագ վազել վազքելով կատարել կրակի տակ, յերբ արագությունից ե կախված քո կյանքը։ Առանց ուժի ու ճարպկության չես հաղթահարի այն արարգելքները, վորոնք կկառուցի հակառակորը, չես կարող տեղափոխել արկը, փամփուշտներով արկզը, չես կարող մարտից դուրս բերել վերակոր ընկերոջը։ Ֆիղիկական ուսուցումը պատրաստում ե մարտիկին նրա համար, վորպեսզի հեշտությամբ և առողջությունը էլորցնելու կարողանաւ տանել մասնական աշխատանքի բոլոր դժվարություններն ու զրկանքները մարտի ամեն տեսակ պայմաններում, ամեն տեսակ յեղանակին, տարվա ժամանակին։

Շարային պատրաստությունը սովորեցնում ե մար-

տիկին ճշտությամբ շարժվել շարքում, արագորեն ընդունել անհրաժեշտ մարտական կարգը։ Ժամանակակից մարտը տեխնիկայի կիրառման չնորհիվ (սավառնակ, տանկ, զրահապատ և այլն) լի յե անսպասելի գեալքերով, արագահոս ե։ Նա (մարտը) կարող է սկսվել ուղղակի յերթում, զիշերթում և այլն։ Սառրարաժանման շարային համաձայնեցումը կարդի պահպանման գրավականն ե, խուճապի զեմ զենք ե, զորքերի տարրեր տեսակների համագործակցության համար անպայման յերաշխիքն ե։

Տակտիկական ուսուցումը հանդիսանում ե կարմիք բանակի մարտական պատրաստության հիմքը։ Անհատական կարգով ուսուցումն սկսելով, մարտիկն աստիճանաբար տիրապետում ե գործելու հմտությանն ստորաբաժանման կազմում, զորամասի կազմում, միավորման կազմում։ Նա ուսումնասիրում ե քողարկման և տեղանքի ողտագործման կանոնները։ Նա սովորում ե, թե ինչպես պետք ե ամրացնել տեղանքը (խրամատներ փորել, զնդացրային բներ և այլն), ինչպես պետք ե դիտել հակառակորդին, ինչպես հետախուզել, շարժական պահպանության ծառայությունը կատարել։ Նա գործողությունների փորձ ե ստանում մարտի տարրեր պայմաններում՝ պաշտպանության և հարձակման ժամանակ, անտառում, զիշերը և այլն։

Ընդհանուր-զորական, տակտիկական պարագմունքների ժամանակ կարմիքը բանակայինը ծանոթանում ե զենքի մյուս տեսակների և նրանց տեխնիկայի հետ, սովորում ե համագործակցել նրանց հետ։

Հատկապես ուսուցման այդ մասը հանդիսանում ե ամենից ավելի բնական և կարևոր։ Այստեղ մարտիկը

վերտիչակում և մարտի ամենաբարդ ձևերը, տիրապետական իր տեխնիկային, սովորում ե կոիվ մղել հակառակորդի տեխնիկայի գեմ :

Տակտիկական պատրաստության հետ անդաժան անցնում ե մարտիկի հրածգային պատրաստությունը : Նա նպատակ ունի սովորեցնելու մարտիկին կրակել գիպուկ իր զենքով (հրացանով, գնդացրով, թնդանոթով, նոնանետով և այլն) : Բայց այդ դեռ քիչ և : Հրետափորը պետք է կարողանա վոչ միայն զիսպուկ հրածգել, այլև իր կրակով համադործակցել հետևակի մանյովը հետ : Հրածիղը պետք է կարողանա վոչ միայն արագորեն գտնել և հարվածել շարժվող նշաններին, այլև նելացի հրածգություն կատարի կաղված զորամասի տակտիկական դորձողւթյունների հետ՝ պաշտպանելով մարտից դուրս դալը, աջակցելով հարճակմանը, ձդուելով հակառակորդի հետևակին կտրել, բաժանել իր տանկից և այլն : Վորովիսի դեպքում հաճախ հրածիղներն ու գնդացրողները կրակ են վարում տակտիկական շատ բարդ պայմաններում — իբրևնց զորամասերի զիսպուկներով, նրանց դասավորության արանքներով : Հաստիկապես զբա համար հրածգային պատրաստությունը տարվում ե տակտիկական պատրաստության հետ կապված :

Մարտիկի ուսուցման ամբողջ կուրսը տարվում է վորոշ տատիճաններով : Մանյովքներում, վոր անց և՛ կացվում աշնանը, ստուգվում ե մարտիկի պատրաստությունը, նա, այսպես ասած, քննություն ե տալիս Առհրավային յերկրի պաշտպանության համար իր ողատրաստականությունից և ընդունակությունից :

ՀՀ Ազգային գրադարան



NL0221567

40.509